

ԲԳԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՐՉՈՒԹՅՈՒՆ

355.3

Խ-11

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱԾ ԱՌԱՅՈՒԹՅԱՆ,
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ
ՏԱՐՎՈՂ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆԲՆԵՐԻ

1932-33 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

ԳԵՏՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

ՌԱԶՄՀՐԱՏԲԱԺԻՆ

1932

3553

41

uf

2802-10

ԱՌՆՁԻՆ ՏԱՐՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՐ ՔԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՅ ՏԱՐՎԱԿԱՆ
ՔԱՂԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՈՐԻՆՆՏԻՐ ՊԼԱՆ
1932—33 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԿԱՆ ՀԱՄԱՐ

Ամսադրամ շրջան

1. Կարմիր բանակի խնդիրներն առ կառուցվածքը . . . 12 ժամ
2. Խորհրդային խնայողության խնդիրներն առ կառուց-
վածքը . . . 16 »
3. Սոցիալիստական շինարարության գլխավոր գիծը . 22 »
4. Համ ԿԿ (ը) . . . 12 »
5. Միջազգային հեղափոխական շարժումը և Կոմիտեները . 8 »

Ը ն դ ա մ ե ն ը՝ 64 ժամ

- Կարմիր բանակի մարտական ուղին¹⁾ . . . 6 ժամ
- Ընթացիկ քաղաքականությունը . . . 20 »
- Ֆրկնողական և ստուգողական պարապմունքներ . 20 »

Ը ն դ ա մ ե ն ը՝ 130 ժամ

Ամսադրամ շրջան

1. Կարմիր բանակային խնդիրները մարտական պայ-
մաններում . . . 4 ժամ
2. Ծրագրի հիմնական հարցերի կրկնությունը . . . 28 »
3. Ընթացիկ քաղաքականությունը . . . 28 »

Ը ն դ ա մ ե ն ը՝ 60 ժամ

Ը ն դ ա մ ե ն ը՝ 190 ժամ

¹⁾ Կարմիր բանակի մարտական ուղին թեման մշակվում է
1933 թվի փետրվարին ԲԶԿԻ 15-րդ առեկազարձի նախապատ-
րաստության կարգով:

1008
34243

ԽՄԲԱԿԱՎԱՐԻ ՆԱԽԱԲԱՆԸ ԾՐԱԴՐԻՆ

Կուսակառավարական և շահակառարկային իրադրությունները ԲԳԿԻ-ում: Կապիտալիստական բանականությունը գինվորների քաղաքական մշակումը — մի մեջնեց է, վերը բուրժուական կողմից գործադրվում է գինվորների դասակարգային խաբեյության համար: Քաղաքականությանը կարմիր բանակում — գործիք է ԲԳԿԻ մարտիկների սոցիալիստական լուսավորության և դասակարգային համախմբման համար: Յուրաքանչյուր կարմիր բանակային կողմից պարզ ըմբռնումն այն խնդիրներին, վերոնց համար նա կոչված է պայքարելու ԲԳԿԻ շարքերում, մարտիկների դասակարգային միաձուլութունն ու գիտակցականութունը — գրավականն են կարմիր բանակի գործառնների մարտական հզորության:

Քաղաքացիական — մարտիկների քաղաքական դաստիարակության կարևորագույն ձևն է:

Ինչպես են տարվում քաղաքացիականները ԲԳԿԻ-ում: Քաղաքացիականների ծրագրի հիմնական բովանդակութունը և ընթացիկ քաղաքականության հարցերը քաղաքացիականներում:

Կարմիր բանակայինների ինքնապատրաստութունը: Քաղաքացիականը և նրանից ոգտվելու ձևերը: Կարմիր բանակայինի տեսքը:

Պահանջներ, վերոնց առաջադրվում են կարմիր բանակայինին քաղաքացիականները յուրացնելու վերա-

բերմամբ: Ստուգումներ, վաշտային, գնդային առաջական ստուգումներ:

Կարմիր բանակայինի պարտականությունները քաղաքացիականներին բարձր յուրացման համար մղած պայքարում: Կարգապահության նշանակութունը քաղաքացիականներում: Խմբակավարի բոլոր պահանջների խստիվ կատարումը, յուրաքանչյուր կարմիր բանակայինի մշտական օխտեմատիկ աշխատանքը՝ իր քաղաքական մակարդակի բարձրացման վրա, դասադրքի, թերթերի ընթերցում, հաճախակի նայելն իր տետրին — գրավականն են կարմիր բանակայինների կողմից քաղաքացիականների բարձր յուրացման:

Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը քաղաքացիականներում: Ավելի ուժեղների պարտականությունն է ոգնել ավելի թույլերին:

Կոմունիստներն ու կոմյերիտականները պարտավոր են առաջավորներ լինել ուսուցման մեջ:

1 ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑ-
ՎԱԾՔԸ (10-12 ԺԱՄ)

Ա) ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ (2 Ժամ)

1. Կարմիր բանակը—պրոլետարական դիկտատու-
րայի բանակն է, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի պահակը:
«Կարմիր բանակը հանդիսանում է աշխատավորության
աշխարհում առաջին և միակ հայրենիքի՝ պրոլետարա-
կան պետության զենքը: Նա կռված է ապահովելու և
պաշտպանելու ԽՍՀՄ անկախությունն ու սոցիալիստա-
կան շինարարությունը՝ սոցիալիզմի և պրոլետարական
հեղափոխության թշնամիների բոլոր հարձակումներից»
(ԲԳԿԻ ղաչտային կանոնադրիք):

Կապիտալիստական բոլոր յերկրներում «բանակը
ճնշում է բանվորներին, ծառայում վորպես հենարան
տերերի համար: Ի տարբերություն այդպիսի բանակ-
ներից, մեր Կարմիր բանակն այն առանձնահատկու-
թյունն ունի, վոր նա հանդիսանում է պրոլետարական
դիկտատուրայի համատեման զենք, կալվածատերերի ու
կապիտալիստների լծից բանվորների և դյուղացիների
ազատագրման զենք» (Ստալին): Կարմիր բանակի առա-
ջացումը վորպես Հոկտեմբերյան հեղափոխության բա-
նակ, նրա կոմիտմն ու աճումը քաղաքացիական պատե-
րազմի տարիներին, ոտարյեղիդյա և ռուսական կապի-

տալիստները դեմ պրոլետարական դիկտատուրայի, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համար մղած մարտերում: Կարմիր բանակը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի պահակն է, Խորհրդային իշխանության քաղաքականության հենարանը:

Կարմիր բանակի անբախտելի կապն աշխատավորության հետ—սպացուցն է աշխատավորության շահերի, սոցիալիզմի համար մարտնչող Կարմիր բանակի դասակարգային նյության:

«Հին ժամանակներում, և հենց այժմ էլ կապիտալիստական յերկրներում ժողովուրդը վախենում էր և շարունակում է վախենալ բանակից: Բանակի և ժողովրդի միջև գոյություն ունի պատենչ, վորն անջրպետում է բանակը ժողովուրդից: Մեզ մոտ ընդհակառակը բանակըն ու ժողովուրդը կազմում են մի ամբողջություն, մի ընտանիք... Սյդայիսի բանակը կունենա ամենամոլոր թիկունքը, այդպիսի բանակը անսպարտելի յե» (Ստալին):

2. Կարմիր բանակը.—համաշխարհային հեղափոխության բանակն է: Կարմիր բանակի խնդիրների ինտերնացիոնալ (միջազգային) բնույթը, վորը պաշտպանում է միջազգային պրոլետարիատի սոցիալիստական հայրենիք—ԽՍՀՄ սահմանները իմպերիալիստների հարձակումներից:

«Կապիտալիստական յերկրներում բանակները սովորաբար դաստիարակվում են ուրիշ պետությունների նկատմամբ ատելության վրդով, ուրիշ յերկրների բանվորների ու գյուղացիների նկատմամբ ատելության վրդով... Մեր Կարմիր ուժը նրանումն է, վոր նա իր ձեռքյան առաջին իսկ օրից դաստիարակվում է ինտեր-

նացիոնալիզմի վրդով, բոր յերկրների բանվորների նկատմամբ սիրո ու հարգանքի վրդով, յերկրների միջև խաղաղություն հաստատելու և պահպանելու վրդով... Ինտերնացիոնալիզմի վրդով դաստիարակված մեր բանակն անհամար բարեկամներ ու դաշնակիցներ ունի աշխարհի բոլոր մասերում» (Ստալին):

«Կարմիր բանակը հանդիսանում է համաշխարհային պրոլետարական հեղափոխության ղինված ուժերի ավանգարդը» (Վորոշիլով):

3. Համ Կ(բ)Կ Կարմիր բանակի կազմակերպիչն ու առաջնորդն է: Պրոլետարական դիկտատուրայի ղեկավար ուժ—ՀամԿ(բ)Կ—կազմակերպիչն ու առաջնորդն է Կարմիր բանակի: «Կուսակցությունը պարծենում է վոր նրան հաջողվեց բանվորների և գյուղացիների ոգնությամբ ստեղծել աշխարհում առաջին Կարմիր բանակը, վոր մեծաքույն ճարտերում պաշտպանել է բանվորներին ու գյուղացիներին: Կուսակցությունը պարծենում է, վոր Կարմիր բանակին հաջողվեց պատվով անցնել ժնր յերկրի բանվոր դասակարգի և գյուղացիության ձեռքին և արտաքին թշնամիների դեմ մղած խստագույն մարտերի ծանր ճանապարհը, վոր նրան հաջողվեց ձեռկերպվել վորպես մեծաքույն մարտական հեղափոխական ուժ՝ ի սարսափ բռնվոր դասակարգի թշնամիների, ի սուրախություն բոր կեղեքվածների և սորկացվածների» (Ստալին): Լենինի, Ստալինի և կուսակցության կենտկոմի դերը Կարմիր բանակի ստեղծման և ղեկավարման գործում՝ քաղաքացիական կռիվների տարիներին, վարն ապահովեց Կարմիր բանակի հաղթանակները:

Կուսակցական զորահամալսները և Կոմունիստների դերը
քաղաքացիական պատերազմի տարիներին: Կուսակցու-
թյան Կենտկոմի և ընկ. Ստալինի ղեկավարությունը
Կարմիր բանակի նկատմամբ ժամանակակից չըջանում:

II ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՅՎԱԾ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

(2 ժամ)

3

1. Կարմիր բանակի համալրման դասակարգային
հիմունքները: «Ձեռքը ձեռքին ԽՍՀՄ պաշտպանությունն
իրագործվում է միայն աշխատավորության կողմից»
(Պարտադիր զինվորական ծառայության մասին որեն-
քը): Անհարազատ տարրերին Կարմիր բանակ չթողնելը,
Կարմիր բանակային զորամասերի դասակարգային միա-
ձուլությունը— ԲԳԿԲ մարտունակության հիմքն են:
Կարմիր բանակը—բանվորների և գյուղացիների զին-
ված միությունն է բանվոր դասակարգի և նրա կուսակ-
ցության ղեկավարությամբ: Կարմիր բանակի դասա-
կարգային միաձուլության ամրացումը սոցիալիստական
չինարարության հսկայական հաջողությունների և հաս-
տատուն պրոլետարական բայլչևիկյան ղեկավարության
հիման վրա:

Յուրաքանչյուր Կարմիր բանակայինի պարտակա-
նությունն է—ամեն կերպ ամրացնել Կարմիր բանակի
չարքերի դասակարգային միաձուլությունը: Յուրաքան-
չյուր Կարմիր բանակային պարտավոր է հայտնաբերել
դասակարգային բաղձադատիկ աչալրջություն, հայտ-
նաբերել և մերկացնել բանակ սողոսկած դասակարգայ-
նորեն խորթ տարրերին և անհաշտ հակահարված տալ
դասակարգային թշնամու յեղություններին:

2. Լենինյան ազգային քաղաքականության հիմունք-
ների կենսագործումը Կարմիր բանակում: «Մեր բանակը
հանդիսանում է ժողովուրդների միջև յեղբայրության
բանակը, ճնշված ժողովուրդների ազատագրման բանա-
կը, մեր յերկրի ժողովուրդների ազատության և ան-
կախության պաշտպանության բանակը... Սովորաբար
բանակները դաստիարակվում եյին չովինիզմի վոգով,
հափշտակումի վոգով, այլ ժողովուրդներին ճնշելով-
անհրաժեշտության վոգով... Մեր բանակն արմատապես
տարբերվում է գաղութային բանակներից: Նրա ամբողջ
եյությունը, նրա վողջ կառուցվածքը հիմնվում է մեր
յերկրի ժողովուրդների միջև բարեկամությունն ամ-
րացնելու վրա, ճնշված ժողովուրդների ազատագրելու
գաղափարի վրա, Խ. Միության կազմի մեջ մտնող սո-
ցիալիստական հանրապետությունների ազատությունն
ու անկախությունը պաշտպանելու գաղափարի վրա...
Դրանում է այն բանի դրավականը, վոր մեր բանակը
կրիտիկական բոսյին մեծագույն աջակցություն կդտնի
մեր անծայրածիր յերկրում բնակված բոլոր և ամեն տե-
սակի ազգությունների միլիոնավոր մասսաների մեջ»
(Ստալին):

Կարմիր բանակի ազգային զորամասերը: Աշխա-
տանքն ազգային փոքրամասնությունների մեջ կարմիր
բանակային զորամասերում:

Յուրաքանչյուր Կարմիր բանակային պարտավոր է
ամրացնել բոլոր ազգությունների աշխատավորության
մարտական միությունը Կարմիր բանակի չարքերում,
անհաշտ պայքար մղի մեծապետական չովինիզմի, տե-
ղական նացիոնալիզմի և հրյատեցության (անտիսեմի-
տիզմի) արտահայտությունների դեմ:

3. Կարմիր բանակի կազմածքը: Յերկրային (տե-
րիտորիալ) սխտեմի դերը ԽՍՀՄ զինված ուժերի շի-
նարարութեան մեջ: Յերկրային սխտեմի լայն և հետևե-
ղական կիրառման հնարավորութիւնը միայն Խորհրդա-
յին Միութեան պայմաններում: ԲԳԿԻ կազմային զորա-
մասերի առանձնատես պատասխանատու դերը՝ իմպե-
րիալիստների կողմից Խորհրդային Միութեան վրա հար-
ձակման դեպքում: Սոցիալիստական արդունաբերու-
թեան աճման և դյուղատնտեսութեան սոցիալիստական
վերակառուցման նշանակութիւնը յերկրային շինարա-
րութեան համար:

Ընդհանուր պարտադիր զինվորական ծառայութեա-
նը: Կարմիր բանակի համալրման սխտեմը և ծառայու-
թեան ժամանակամիջոցները: Միջդինակուչային պատ-
րաստութիւն: Իսկական զինվորական ծառայութիւնը,
պահեստում լինելը, արտադրային պատրաստութիւնը:
Աշխատավորութեան ռազմական պատրաստութիւնը և
Կարմիր բանակի ռեզերվ—Պաշտ—Աշխատիքի դերը:

III ՊԵՏԿԱԶՄԸ ՅԵՎ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԳԿԻ-ՈՒՄ (2 ժամ)

1. Կարմիր բանակի պետերի կազմը: Կապիտալիս-
տական բանակների սպաների դատակարգային կազմի
արժատական տարբերութիւնը: Կարմիր բանակի հրա-
մանատարների և քաղաքատնային դատակարգային
կազմից: Կարմիր բանակի պետկազմի համալրման սխ-
տեմը: Ռազմա-ուսումնական հիմնարկները ԲԳԿԻ-ում:
Կարմիր բանակայիններին ղեկավարող ծառայութեան

թողնելու կարգը և ռազմա-ուսումնական հիմնարկներն
ընդունվելը: Պետկազմի (կրտսեր, միջին, ավագ և
բարձր) դերը մարտական և քաղաքական պատրաստու-
թեան ղեկավարման և յերկաթե զինվորական կարգապա-
հութեան ամրացման գործում: Հրամանատարը— «Իր
զորամասի վճռական, հաստատուն, հաճախակի և մաք-
տական ղեկավարն է» (բջիջների քարտուղարների Յ-րդ
համաբանակային Խորհրդակցութեան վերոշումները):
Հրամանատարը— կարգապահութեան և իր ու ստո-
րադրյալների նկատմամբ պահանջկոտ լինելու որինակ
է: Հրամանատարի կարգադրութիւնների առաւարկե-
լիորեն կատարումը ԲԳԿԻ կարգապահութեան հիմքն է:

Միահրամանաւորութիւնը—Կարմիր բանակի կա-
ռավարման հիմնական սկզբունքն է: Քաղղեկները, վաշ-
տերի հրամանատարների քաղաքականները, կոմիսար-
ները, զնդերի հրամանատարների բողոքնականները:

Գունդ—դիվիզիա—կորպուս—մարզ: Մարզային Հեղ-
Ռազմ. Խորհուրդ: Հեղ. Ռազմ. Խորհուրդ: Ռազմածո-
վային ժողկոմ ընկ. Վորոշիլովը— Կարմիր բանակի
բայլեիկյան առաջնորդն է: Ռազմածովային ժողկոմ և
ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. Խորհրդի նախագահ՝ ընկ. Վորո-
շիլովի մարտական ուղին և նրա դերը քաղաքացիական
պատերազմում ու ժամանակակից շրջանում Կարմիր բա-
նակի ղեկավարման գործում:

2. Կարգապահութիւնը ԲԳԿԻ-ում: Կարմիր բանա-
կի ղեկավարման կենտրոնացումը: Յերկաթե զինվորա-
կան կարգապահութիւնը—Կարմիր բանակի մարտական
հզօրութեան հիմքն է: ԲԳԿԻ կարգապահութեան դասա-
կարգային ելութիւնը, նրա տարբերութիւնը բուրժու-
ական բանակների կարգապահութեանից: Ճշիւ ամբող-

Ջովին ու անձնվիրաբար չի ոգնում Կարմիր բանակին, բոլոր ուժերով չի պաշտպանում կարգն ու կարգապահությունը նրանում, նա մասնիչ և է դավաճան»։ Կարգապահության նշանակությունը մարտական պարագայում։ «Յեթե մտածենք այն մասին, թե վերջի վերջին չն եր ընկած այն բանի ամենախորը հիմքում, վոր այդպիսի պատմական հրաշք տեղի ունեցավ, վոր թույլ, ուժասպառ յեղած, հետամնաց յերկիրը հաղթեց աշխարհի ամենաուժեղ յերկրներին, ապա մենք տեսնում ենք, վոր այդ—կենտրոնացումն էր, կարգապահությունը, անձնադոժությունը» (Լենին)։ Յերկաթե զինվորական կարգապահության վճռական նշանակությունը խաղաղ ժամանակ (ներքին կարգ ու կանոնում, ուսուցման մեջ, տեխնիկայի խնամման գործում և այլն) վորպես ԲԳԿԳ մարտունակության կարևորագույն պայման։ Անկարգապահությունը—հիմնական պատճառն է վթարումների ջարդվածքների, դժբախտ պատահարների։

«Կարգապահություն և կազմակերպվածություն—ահա այն խոսքերը, վորոնք պետք է թափով համակենմեր վողջ կյանքը։ Կարգապահություն և կազմակերպվածություն աշխատանքում, կենցաղում, ուսուցման մեջ, իրար միջև ունեցած փոխհարաբերություններում, փողոցում իրեն պահելու մեջ, հասարակական վայրերում, հանգստի ժամանակ—ամեն տեղ և ամենուրեք կարգապահություն և կազմակերպվածություն։ Դրանք մեղ պետք են ինչպես ող» (Վորոշիլով)։

Հրամանատարի պարտականությունն է—անչեղորեն պահանջել զինվորական կարգապահության վորոշակի պահպանումը և վճռականորեն պայքարել կարգապահության ամենանվազ խախտումների դեմ։ Հրամանատարի

իրավունքները՝ զորմասի կարգապահությունն ամրացնելու գործում։ Կարգապահական տուժերը, խրախուսանքները, պարգևները։

Յուրաքանչյուր կարմիր բանակային պարտավոր է խոտորեն և անչեղորեն պահպանել հեղափոխական կարգապահություն և անառարկելիորեն կատարել հրամանատարների բոլոր հրամանները, հրամանատարներ, վորոնք դրված են բանվորա-գյուղացիական կառավարության կողմից (կարմիր բանակայինի հանդիսավոր խոտումից)։

Կարմիր բանակայինի պարտականությունները ուղղմական դադանիքը պահելու գործում։

IV ՏԵԽՆԻԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

(2 ժամ)

1. Տեխնիկայի դերն ապագա պատերազմում։ Թվեր և որինակներ, վորոնք բնութագրում են ռազմական տեխնիկայի զարգացումն ու հզորությունը և նրա նշանակությունը ժամանակակից մարտում. բանակի մեքենակությունը ժամանակակից մարտում. բանակի մեքենայացումն ու մոտորացումը, հրետանու զարգացումը, ավտոմատ զենքերը։ Բուրժուական բանակների տեխնիկական հաղեցումը։

Տեխնիկան կարմիր բանակում։ Բուրժուական բանակների նկատմամբ կարմիր բանակի գերադանցությունը, վորտեղ տեխնիկան գտնվում է բանվոր և գյուղացի մարտիկի ձեռքին, վորը պայքարում է իր շահերի համար, նվիրված պրոլետարական զիկտատուրայի պետությունը։

Մարտիկների դասակարգային դիտակցությունը և բարձր զինվորական կարգապահությունը—տեխնիկայի օիրապետման գրավականն են։ Կարմիր բանակի դասա-

կարգային գիտակցութիւն, կարգապահութիւն և բարձր տեխնիկական ուսուցման նշանակութիւնը թըշնամու նկատմամբ հաղթանակ տանելու համար:

2. Զորքերի տեսակների համագործակցութիւնը: ԽՍՀՄ զինված ուժերի կազմը և ԲԳԿԲ կազմութիւնը ժամանակակից մարտի պահանջները և ԲԳԿԲ տեխնիկական հագեցվածութեան հետ կապված: Ընդհանուր տեղեկութիւնները զորքի տեսակների և նրանց կազմութեան մասին:

Զորքի բոլոր տեսակների համագործակցութիւնը—մարտում հաղթանակելու հիմնը և: Զորքի բոլոր տեսակների պարտականութիւնը՝ զորքերի հիմնական տեսակ՝ հետևակի նկատմամբ և հետևակի պարտականութիւնները զորքի մյուս տեսակների նկատմամբ: Յերկաթե զինվորական կարգապահութիւնը—զորքի բոլոր տեսակների համագործակցութեան գրովականն և:

3. Տեխնիկային տիրապետելու խնդիրը: Ընկ. Ստալինի լուղունդը—«տիրապետել տեխնիկային» և այդ լուղունդի նշանակութիւնը կարճիր բանակի համար: «Մեզ վրա յեղած հարձակմանը մենք պարտավոր ենք հակադրել մեր յերկաթյա, դերաղանց ռովորած, քաղաքականապես կայուն, լավ զինված բայլճեկիյան բանակը» (Վորոշիլով): Տեխնիկային տիրապետելու դործում մարտիկի գլխավոր խնդիրներն են,—էր զենքի, նրա նյութական մասին և մարտական հաստիութիւններին կատարելապես յիրապետելը, զորքի մյուս տեսակների տեխնիկային ծանոթ լինելը և նրա հետ համագործակցել իմանալը, հակառակորդի տեխնիկայի դեմ արտքարել կարողանալը, զենքի և մեքենաների խնամելը, վթարումների լիակատար լիկվիդացիան:

Տեխնիկային տիրապետելու խնդիրը և դորմասերի մարտական պարտաստութիւնը: Հրաձգային պարտաստութիւնը և նրա նշանակութիւնը: Տակտիկական պարտաստութիւնը վորպես մարտական պարտաստութեան առանցք: Ֆիզիկական և քարային պարտաստութիւն: Տակտիկական և համագործակցական պարտավորւնքներ: Մանյովրաներ: Ուսուցման պլանը և աստիճանները:

V. ԿՈՒՍԲԱՂԱՇԵԱՍՏԱՆՔԸ ՄԳԿԲ-ՈՒՄ (2 ժամ)

1. Կուսակցական-քաղաքական աշխատանքը ԲԳԿԲում: Քաղաշխատանքը կարմիր բանակում—դասակարգային միաձուլութեան և սոցիալիստական լուսավորութեան զենքն և: Կարմիր բանակն առաջնակարգ քաղաքական դպրոց և: Կուսքաղաքական աշխատանքը—ԲԳԿԲ մարտունակութիւնն ամրացնելու զենքն և: Կուսակցութիւնն և ղեկավարում քաղաշխատանքը կարմիր բանակութիւնն և ղեկավարում քաղաքական աշխատանքը ԲԳԿԲում: Կուսակցական-քաղաքական աշխատանքը գլխավորում վորպես մարտիկներին կուսակցութեան գլխավոր գծի և նրա կենտրոնի շուրջ դասակարգային համախմբման զենքն, վորպես մարտական ուսուցման տեսակների ու վորակի բարձրացման զենք: Կուսքաղաշխատանքի կազմակերպումը: Պետկազմի դերը կուսքաղաշխատանքում: մակերպումը: Վորպես ԲԳԿԲ-ում տարվող կուսքա-քաղաքական ղեկավար և կազմակերպիչ: Քաղղեկները, կոմիտաները, (զենքի հրամանատարի քաղղեկանը), ղիվքաղբաժինները, Ռադմ. շրջանների քաղվարչութիւնները, ՊՈՒՌ-ի պետ—ընկ. Գամարնիկը:

Կոմունիստական բՆԻՇները Կարմիր բանակում և նրանց աշխատանքը, կոմյերիտական կազմակերպությունները Կարմիր բանակում և նրանց աշխատանքը:

Կոմունիստների և կոմյերիտականների խնդիրները, վորպես առաջավորներ ուսուցման և կարգապահության մեջ: ԲԳԿԻ կոմունիստները—Համ Կ(բ)Կ մարտական ջոկատն են, վորոնք պայքարում են կուսակցության գլխավոր դժի համար՝ ընդդեմ ամեն տեսակի ապորտոնիզմի, հատկապես ընդդեմ աջ թեքման, վորպես ներկա շրջանում գլխավոր վտանգի: Կարմիր բանակայինների խնդիրները բՆԻՇի վերաբերմամբ, կուսակցության և կոմսոմոլի մեջ ընդունվելու կարգը:

Քաղաքական պարապմունքները—կարմիր բանակայինների քաղաքական պատրաստության կարևորագույն ձևն են:

Կուսակցական լուսավորությունը և նրա նշանակությունը:

Ակումբները, լենինյան անկյունները, հասարակական կազմակերպությունները ԲԳԿԻ-ում: Կարմիր բանակային մամուլը—կենտրոնական, մարդային, գիլիդիական, գնդային, վաշտային: Զինթղթակիցները և աշխատանքը նրանց մեջ: Կրոնի դասակարգային ելույթները և հակակրոնական աշխատանքը ԲԳԿԻ-ում:

Կարմիր բանակայինը պետք է ամեն կերպ բարձրացնի իր քաղաքական պատրաստությունը, իրագեկ լինի միջադպրոցային դրությանը, խորհրդային Միության կյանքին, կուսակցության և կառավարության վորոշումներին, ակտիվորեն մասնակցել դորամասի քաղաքական գյանքին, կանոնավոր կերպով թերթեր կարդա, ակտի-

վորեն ոգնի քաղդեկին, կուսակցական կազմակերպության և կոմսոմոլին:

ԲԳԿԻ մարտիկը ակտիվ կիրառոն և կուսակցության գլխավոր դժի:

Կարմիր բանակի կապի ամրացումն աշխատավորության հետ—կուսքաղաշխատանքի կարևորագույն խնդիրն է: Կարմիր բանակի և աշխատավորության կապի ձևերը: Բանվորական շեֆությունը և նրա նշանակությունը: Ով է տվյալ դորամասի շեֆը և շեֆական աշխատանքը դորամասում: Կարմիր բանակայինների պարտականություններն աշխատավորության հետ կապի ամրացման գործում:

2. Սոցիալիստական մրցակցությունը և իմքնագնաց դատությունը կարմիր բանակում: Սոցմրցակցությունը կարևորագույն զենք է սոցիալիստական շինարարության և աշխատավորության վերադաստիարակման: Սոցմրցակցության նշանակությունը գործարանում և կոլխոզում: Սոցմրցակցությունը բանակում: Կարմիր բանակայինների ամբողջ յեռանդը, ամբողջ խանդավառությունը դորամասի մարտական ու քաղաքական պատրաստությունն ամրացնելու շուրջ կենտրոնացնելու անհրաժեշտությունը: Սոցմրցակցությունն ու հարվածայնությունը վորպես կարևորագույն զենք մարտական ու քաղաքական պատրաստության տեմպերի ու վորակի բարձրացման, դորամասի դասակարգային համախմբվածության համար: Սոցմրցակցության ձևերն ու ոքյելտները կարմիր բանակում: Հարվածայնության դրությունը վաշտում, գնդում, բանակի մյուս դորամասերում: Գնդի լավագույն հարվածայինների աղգանունները: Պայքար մարտական ուսուցման պլանների կատարման և

գերակատարման համար: Պետկադմ—սոցմրցակցութ-
յան ղեկավարն է: Կուսակցական և կոմյերիտական
կազմակերպությունների դերը սոցմրցակցության գոր-
ծում:

Ուսցիոնալիզատորական աշխատանքը և նրա նշանա-
կությունը:

Ինքնաքննադատությունը Կարմիր բանակում վո-
պես ԲԳԿԻ մարտունակությունն ամրացնելու գեներ:
Ինքնաքննադատությունը Կարմիր բանակում գործադրե-
լու առանձնահատկությունները և նրա կոչումը—գորա-
մասի մարտունակությունն ամրացումը, նրա դառակար-
գային միաձուլությունը:

Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւմ է Կարմիր բանակի տարբերությունը
կապիտալիստական բանակներից:

2. Ինչո՞ւ յենք մենք Կարմիր բանակն անվանում հա-
մաշխարհային հեղափոխության բանակ, բոլոր յերկրնե-
րի բանվորների բանակ:

3. Կուսակցության դերը Կարմիր բանակի կազմա-
կերպման և քաղաքացիական պատերազմում ու ժամա-
նակակից շրջանում նրան ղեկավարելում:

4. Ո՞վ և ինչո՞ւ յե զրկված Կարմիր բանակի շարքե-
րում լինելու իրավունքից:

5. Ինչպե՞ս և կենսագործվում լենինյան ազգային
քաղաքականությունը Կարմիր բանակի շինարարության
մեջ և վորպիսին են Կարմիր բանակի խնդիրները Կար-
միր բանակի շարքերում բոլոր ազգությունների աշխա-
տավորների համալսմբվածությունն ամրացնելու գոր-
ծում:

6. Ինչո՞ւմ է Կարմիր բանակի պետկադմի արմա-
տական տարբերությունը բուրժուական բանակների
սպանների կադմից:

7. Ի՞նչպիսին է հրամանատարի դերը ղորամասում:

8. Ինչո՞վ է տարբերվում ԲԳԿԻ կարգապահությունը
նը բուրժուական բանակների կարգապահությունից:

9. Ինչո՞ւ յե Կարմիր բանակում անհրաժեշտ յերկա-
թե զինվորական կարգապահություն:

10. Ինչպի՞սին է տեխնիկայի դերը ժամանակից
պատերազմում:

11. Ի՞նչ նշանակություն ունի մարտում ղորքի բո-
լոր տեսակների սերտ համագործակցությունը և ի՞նչով
պետք է արտահայտվի այդ համագործակցությունը:

12. Ինչպի՞սին են ԲԳԿԻ մարտիկները խնդիրները:
տեխնիկայի տիրապետման գործում:

13. Ի՞նչ նշանակություն ունի կուսակցական—քա-
ղաքական աշխատանքը Կարմիր բանակում և ո՞վ է դե-
կավարում այդ աշխատանքը:

14. Ինչպի՞սին է սոցիալիստական մրցակցության
դերը Կարմիր բանակում:

15. Ի՞նչպիսին է ինքնաքննադատության դերը Կար-
միր բանակում և ինչո՞ւմ են Կարմիր բանակում նրա
գործադրման առանձնահատկությունները:

16. Բանակի և աշխատավորության փոխհարաբե-
րության խնդրում ի՞նչ տարբերություն մեր և կապի-
տալիստական յերկրների միջև և ինչպե՞ս պետք է յու-
րաքանչյուր կարմիր բանակային վերաբերվի աշխա-
տավորությանը:

Գ) ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ԲԱՅԻ ՎԵՐՈՇԻՇՅԱԼ ԿՈՆՏՐՈԼ
ՀԱՐՑԵՐԻՆ ՎՈՐՈՇԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԼՈՒՑ,
ՊԵՏՔ Ե—

1) Իմանա պարտադիր ղինվորական ծառայության մասին որոշում (կարմիր բանակային ծառայության վերաբերող) 1-ին և 14-րդ հատվածների հիմնական մո-
ժենտները.

2) յուրաքանի կարմիր բանակային հանդիսավոր խոստման տեքստը.

3) Իմանա կուսակցության և կոմսոմոլի կանոնա-
դրության այն կետերը, վորոնք վերաբերում են կար-
միր բանակային կուսակցության կամ կոմսոմոլի
մեջ ընդունելուն:

Դ) ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆ-
ՉՅՈՒՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԵՏՔ Ե ԻՐ ԴԵՐԻ
ՄԵՋ ՄՏՅՆԻ—

1) 3-րդ կոնտրոլ հարցի պատասխանը.

2) քաղվածքներ Դաշտային կանոնադրելից և ընկ.
Ստալինի ճառից՝ Կարմիր բանակի դասակարգային
եյուլթյան մասին, վորոնք բերված են այս թեմայի ա-
ռաջին հատվածում և քաղվածք Դաշտային կանոնա-
դրելից՝ Կարմիր բանակի ինտերնացիոնալ խնդիրների
մասին (2-րդ գլխի 1-ին հատվածում).

3) քաղվածք ընկ. Լենինի ցուցումից՝ ԲԳԿԲ կար-
գապահության մասին, վորը բերված է այս թեմայի
3-րդ գլխի 2-րդ հատվածում.

Ա) Կարմիր բանակի կառուցման սխեման (վաշտից
ժխչե ԽՍՀՄ Հեղ. Ռադմ. Խորհուրդը).

Ե) Թվեր (հասարակ դիտարկման) Կարմիր բանակի
պետկադմի դասակարգային կադմի մասին:

II ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՐ ՅԵՎ
ՆՐԱ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ (14—16 ԺԱՄ)

Ա) ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (2 Ժամ)

Բուրժուական պետությունը—մի մեքենա յե, վորի
ողնությունը կապիտալիստները յենթարկված են պա-
հում բանվոր դասակարգին և աշխատավորությանը:
Որինակներ, վորոնք ցույց են տալիս աշխատավորու-
թյան կեղեքումը բուրժուական պետություններում:

Բուրժուական պետական մեքենայի ջարդումը և
պրոլետարական դիկտատուրայի հաստատումը սոցիա-
լիզմ կառուցելու համար—բանվոր դասակարգի արմա-
տական խնդիրները: Խորհրդային պետությունը—պրո-
լետարական դիկտատուրայի պետությունն է: «Խոր-
լետարական դիկտատուրայի պետությունը—դա ղեպի սոցիալիզմ տա-
հըրդային իշխանությունը—դա ղեպի սոցիալիզմ տա-
նող ճանապարհն է, վորը գտել են մասսաները...» (Լե-
նին): Նրա եյուլթյունը, վոր յուրաքանչյուր յերկրի բան-
վորներին ալելի ու ալելի յե դրավում ղեպի իրեն,
կայանում է նրանում, վոր առաջ պետությունը կառա-
վարում է յին այսպես թե այնպես հարուստները, կա-
պիտալիստները, իսկ այժմ, առաջին անգամ պետու-
թյունը կառավարում են, և այն ել մասսայական թվով,

հենց այն դասակարգերը, վորոնց կապիտալիզմը կեդի-
բում եր» (Լենին)։ Շահագործող տարրերին քաղաքա-
կան իրավունքներից զրկումը Խորհրդային Միությու-
նում։ Բուրժուական կուսակցությունների, բուրժուա-
կան մամուլի, աշխատավորությանը վնասելուն ուղղ-
ված ամեն տեսակի դործունեություն արգելումը։
Խորհուրդներ իշխանության օրգանների սոցիալական
կազմը, վորպես ցուցանիշ խորհրդային պետության
դասակարգային ելություն։ Ամբողջ խորհրդային պե-
տական ապարատը ծառայում է աշխատավորների շա-
հերին։ Աշխատավորության մասսայական մասնակցու-
թյունն ու ներգրավումը պետության կառավարման
գործին, պրոլետարական ինքնաքննադատությունը,
աշխատավոր մասսաների մոբիլիզացիան բյուրոկրա-
տիզմի և խորհրդային ապարատի թերությունների
դեմ պայքարելու համար, վորպես ցայտուն օրինակ
պրոլետարական դեմոկրատիայի, պրոլետարական պե-
տության և բուրժուական պետության ու բուրժուա-
կան «աղատության» արմատական տարբերություն։

Խորհրդային իշխանության միջադրային նշանա-
կությունը։

II ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ—ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ե (2 ժամ)

1. Բանվորների և աշխատավոր գյուղացիների դա-
շինքը։ Խորհրդային պետությունը ստեղծված է՝ կա-
պիտալիզմի դեմ մղած հեղափոխական պայքարում բո-
լոր աշխատավորների առաջնորդ—բանվոր դասակարգի
կողմից։ Խորհրդային պետությունը—պրոլետարական

դիկտատուրայի պետությունն է։ «Պրոլետարիատի
դիկտատուրան, յեթե այդ ասենք ավելի հասարակ-
լեզվով, նշանակում է ահա թե ինչ—միայն վորոչ դա-
սակարգ, այսինքն քաղաքային և ընդհանրապես ֆաբ-
րիկա-գործարանային, արդյունաբերական բանվորներն
են ի վիճակի ղեկավարել աշխատավորության և շահա-
գործավորների ամբողջ մասսային հաղթանակը պահելու
և ամրացնելու համար մղվող պայքարում, նոր, սո-
ցիալիստական հասարակարգ ստեղծելու գործում,
դասակարգերի լիակատար վոչնչացման համար մղվող
ամբողջ պայքարում» (Լենին)։

Բանվորական պետության քաղաքականության
հիմքը, դա—բանվոր դասակարգի դաշինքն է գյուղա-
ցիության աշխատավորական մասսաների հետ՝ այդ
դաշինքում ունենալով բանվոր դասակարգի ղեկավար
դեմ և անհաշտ պայքար՝ դասակարգային թշնամու
դեմ։ Որինակներ, վորոնք ցույց տան, թե ինչպես հե-
ղում։ Որինակներ, վորոնք ցույց տան, թե ինչպես հե-
ղում։ Պրոլետարական ղանադան շրջաններում բանվոր դասա-
ղափոխության ղանադան շրջաններում բանվոր դասա-
կարգը և նրա կուսակցությունը պայքարել և գլխավո-
րել են աշխատավորության պայքարը շահագործող
տարրերի դեմ։ Որինակներ, վորոնք ցույց տան, թե
խատավոր գյուղացիության հետ ամուր դաշինք ու-
նենալու համար։

Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիու-
թյան դաշինքի հսկայական ամրացումը ժամանակա-
կից շրջանում՝ համատարած կոլեկտիվացման և կու-
լակություն՝ վորպես դասակարգի վերացման և կոլ-
տնտեսական գյուղացիությանը հողագործության

կենտրոնական դեմք, գյուղում խորհրդային իշխանության գլխավոր հենարան դարձնելու քաղաքականության հաջողությունների հիման վրա:

2. Համկ(բ)կ — պրոլետարական պետության առաջնորդն է: Համկ(բ)կ — բանվոր դասակարգի ավանգարդն է: Համկ(բ)կ — պրոլետարական պետության առաջնորդն ու կազմակերպիչն է: «Առանց կուսակցության, վորպես հիմնական ղեկավար ուժի, հնարավոր չէ վորևէ չափով յերկարատև և ամուր պրոլետարական դիկտատուրա» (Ստալին):

Կուսակցությունն ի՞նչպես է ղեկավարում բանվորական պետությունը: Խորհուրդները, պրոֆմիուսները, կոոպերացիան և այլն — դրանք կուսակցությունից մասսան տանող փուկերն են:

Կուսակցության պայքարը ոպորտունիզմի դեմ՝ մեր յերկրում պրոլետարական դիկտատուրան ամրացնելու համար: Կուսակցության պայքարը տրոցկիզմի դեմ, վորը վերածվել է բուրժուական հակահեղափոխության առաջավոր ջոկատի:

Կուսակցության պայքարը «ձախ» ոպորտունիստների դեմ, վորոնք փորձել և փորձում են գործնականում վերածնել տրոցկիստական վերաբերմունքը դեպի միջակ գյուղացիությունը: Կուսակցության պայքարն աջ ոպորտունիզմի դեմ, վորը գլորվել է դեպի կուլակային հակահեղափոխության դերքերը, վորը հանդիսանում է ներկա շրջանի գլխավոր վտանգը:

III ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (2 Ժամ)

1. Խորհրդային սահմանադրությամբ — ԽՍՀՄ հիմնական որենմխերն են, վորն ընդունվել են ԽՍՀՄ Խորհուրդների 2-րդ համագումարի կողմից: Խորհուրդները — պետական իշխանության մարմիններն են, պրոլետարական դիկտատուրայի որդաններն են մեր յերկրում: Խորհուրդների ընտրության կարգը: Շահադործական տարրերին խորհուրդների ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկումը: Բանվորներից ու աշխատավոր գյուղացիներից խորհուրդներում ներկայացուցչություն ունենալու նորմաները և բանվոր դասակարգի ղեկավար դերի ապահովումը խորհուրդներում: Քաղաքային և գյուղական խորհուրդները, նրանց ֆունկցիաները: Շրջաններ և մարզեր, շրջանային և մարզային գործկոմներ: Խորհուրդների հանրապետական համագումարները, հանրապետության կենտգործկոմն ու Ժողկոմխորհը:

ԽՍՀՄ: Ի՞նչ հանրապետություններ են մտնում ԽՍՀՄ մեջ: ԽՍՀՄ բարձրագույն մարմինները: ԽՍՀՄ կենտգործկոմ, նրա կառուցվածքը — Միութենական Խորհուրդ և Աղդությունների Խորհուրդ: ԽՍՀՄ Ժողկոմխորհ: Համամիութենական և միացյալ Ժողկոմատներ: ԽՍՀՄ պետնիչն ու դրոշակը:

Ընկ. Կալինինը — ՌԽՍՖՅ կենտգործկոմի նախագահն է և ԽՍՀՄ կենտգործկոմի նախագահներից մեկը: Ընկ. Մոլոտովը — ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ:

2. Կարմիր բանակայինը — Խորհրդային Միության քաղաքացի: Ձինվորների քաղաքացիական իրավունքների սահմանափակում և այդ իրավունքներից զրկումը

բուրժուական բանականութիւնը : Կարմիր բանակում «զին-
ծառայողներն ու ղինապարտները ղինվորական ծառա-
յությունը տանելու ամբողջ ընթացքում ոգտվում են
աշխատավորներին տրվող լիակատար իրավունքներից»
(Պարտադիր ղինվորական ծառայության մասին որեն-
քից) :

Կարմիր բանակային իրավունք ունի ընտրելու և
ընտրվելու խորհուրդներում, մասնակցելու համագու-
մարներին, կոնֆերանսներին, ժողովներին, հասարակա-
կան կազմակերպություններին և այլն աշխատանքների :

Խորհրդային իշխանության կողմից տրվող արտո-
նությունները կարմիր բանակայիններին և նրանց ըն-
տանիքներին (խմբակավարը պետք է մանրամասն պատ-
մի այդ մասին, իսկ կարմիր բանակայինները համա-
ռոտ գրեն) :

Հեղափոխական որինականության մարմինները
Կարմիր բանակում : Ռազմական տիրույնաւնները , Զին-
դատախաղությունը և նրանց խնդիրները որինախախ-
տումների դեմ մղած պայքարում :

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է լինի
ԽՍՀՄ գիտակից և ակտիվ քաղաքացի, ակտիվորեն
մասնակցի յերկրի հասարակական-քաղաքական կյան-
քին, ամեն կերպ ոգնի կուսակցությանն ու խորհրդային
իշխանությանը նրանց աշխատանքում :

IV ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (4 Ժամ)

1. Խորհուրդների աշխատանքը : Խորհուրդները—
կուսակցության գլխավոր գծի կիրառողներն են : Խոր-
հուրդների դերն ու խնդիրները սոցիալիստական վե-
րակառուցման շրջանում, վորպես սոցիալիստական
շինարարության բայլեիկյան տեմպերի համար մղվող
պայքարում աշխատավոր մասսաներին մորիլիզացիայի
յենթարկելու և կազմակերպելու դեմք : Խորհուրդները
համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակու-
թյունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկե-
լու քաղաքականությունը կիրառելում : Պայքարը խոր-
հրդային աշխատանքի պրակտիկայում ուղորտունիղ-
մի և դասակարգային թշնամու նկատմամբ հաշտվո-
ղականության դեմ :

Քաղաքային և գյուղական խորհուրդներին խնդիր-
ները՝ ընկ. Ստալինի վեց պայմաններին կատարման և
կոլտոգների կազմակերպչական-տնտեսական ամրաց-
ման համար մղվող պայքարում : Քաղաքային և գյու-
ղական խորհուրդների խնդիրները կարեւորագույն տըն-
տեսական-քաղաքական կամպանիաների անցկացման
գործում, գյուղատնտեսական հարկի դանձում, հացա-
մթերումներ, ցանքային և բերքահավաքի կամպանիա-
ներ և այլն : Խորհուրդների խնդիրները խորհրդային
առևտրի ծավալման գործում :

Խորհուրդների խնդիրները բյուրոկրատիզմի և
խորհրդային ապարատի թերությունների դեմ մղվող
պայքարում : Բյուրոկրատիզմի դասակարգային ար-
մատները և նրա դեմ պայքարելու մեթոդները : Պրոլե-
տարական դեմոկրատիայի և ինքնաքննադատության

հետևողական կիրառումը, բանվորների մասսայական ներգրավումը պետական կառավարման աշխատանքներում (բանվորական շեֆություն, ապարատի գտում, բողոքների բյուրոները և Բանգյուղտեսչությունը, սոցիալխիստական համատեղությունը, սեկցիաների և պատգամավորական խմբակների աշխատանքը) :

Քաղաքային խորհուրդների խնդիրները քաղաքային տնտեսության սոցիալխիստական վերակառուցման գործում : Կուսակցության վորոշումները քաղաքների շինարարության հարցի մասին : Որինակներ, . վորոնք ցույց են տալիս, թե ինչպես են իրագործվում այդ վորոշումները (նոր քաղաքների շինարարությունը, հնգրի վերակառուցումը, բնակարանային շինարարություն և այլն) :

խորհուրդների խնդիրները կուլտուրական շինարարության գործում, ընդհանուր պարտադիր ուսուցման կիրառման գործում :

խորհուրդների խնդիրները յերկրի պաշտպանության ամրացման գործում :

խորհուրդների կարևորագույն խնդիրն է—պաշար հեղափոխական որինականության համար : Հեղափոխական որինականության խորհրդային մարմինները : Դատախազություն, դատարաններ : ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1932 թ. հունիս 25-ի վորոշումը հեղափոխական որինականության մասին : Վճռական պայքարի անհրաժեշտությունն այն պաշտոնական անձանց դեմ, վորոնք թույլ են տալիս միութենական կառավարության որևեցի խախտումներ, նրանց դեմ, ովքեր հանցավոր են աշխատավորների դեմոմներին բյուրոկրատական վերաբերմունք ցույց տալում, կոլտնտեսա-

կան շինարարության հիմնական սկզբունքները խախտելում :

խորհուրդների խնդիրները հասարակական սոցիալխիստական սեփականությունը պահպանելում, Ժողովրդական գույքը հափշտակելու և փչացնելու դեմ մղվող պայքարում :

2. Յերկրորդ հնգամյակը և խորհուրդների խնդիրները : Յերկրորդ հնգամյակը—մեր յերկրում շահագործական տարրերի և դասակարգերի վոչնչացման հնգամյակ է : խորհուրդների դերը յերկրորդ հնգամյակի պատմական խնդիրները կատարելում : Լիկվիդացիայի յեմթարկվող դասակարգային թշնամու կատաղի դեմագրությունը և սյրոյետարական պետության ամեն կերպ ամրացման անհրաժեշտությունը : խորհրդային պետության ամրացման հատուկ անհրաժեշտություն՝ կապիտալիստների կողմից ԽՍՀՄ դեմ ինտերվենցիայի վտանգի առնչությամբ :

V. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (4. Ժամ)

Աղղությունների կեղեքումը հին ցարական Ռուսստանում «Ժողովուրդների բանտում» : «Փոքր» աղղությունների կեղեքումը ցարական կառավարության կողմից, աղղային ծայրագավառներին—Միջին Ասիա, Կովկաս և այլն շահագործումը : Գաղութային Ժողովուրդների և աղղային փոքրամասնությունների ճնշումը Արևմուտքի կապիտալխիստական յերկրներում :

Աղգուլթյունների մնչումը Արևմտյան Ուկրաինայում, Արևմտյան Բելոռուսիայում և այլն:

«Միայն խորհուրդների յերկրում, միայն պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, վորը համախմբում է իր շուրջ բանվորության մեծամասնությունը, հնարավոր դարձավ արմատապես վոլնչացնել աղվային մնչումը, բիոխաղարձ վստահության պայմաններ ստեղծել և ժողովուրդների յեղբայրական համագործակցութեան հիմք դնել» (ԽՍՀՄ սահմանադրությունը):

«...Իր դասակարգային բնությամբ ինտերնացիոնալ Խորհրդային իշխանության կառուցվածքը, խորհրդային հանրապետությունների աշխատավոր մասսաներին մղում է (դեպի մի սոցիալիստական ընտանիքում միանալու ճանապարհը» (ԽՍՀՄ սահմանադրությունը):

Աղգային հարցը խորհրդային սահմանադրությամբ մեջ (Աղգությունների Խորհուրդ, ԽՍՀՄ մեջ մտնող հանրապետությունների իրավունքները, ավտոնոմ հանրապետություններ և այլն): Տնտեսական և կուլտուրական ոգնությունը հետամնաց աղգություններին և ժողովուրդներին, վորպես պրոլետարական պետության աղգային քաղաքականության հիմնական խնդիր: Պայքար հին սովորությունների դեմ (կրոնական, կենցաղային) և անցյալներում մնչված աղգերի կենցաղային, կրոնական և աղգային առանձնահատկություններին զգուշ մոտենալու անհրաժեշտությունը: Մեր նվաճումները աղգային շրջաններում և հանրապետություններում սոցիալիստական շինարարության և կուլտուրական վերելքի գործում:

Վելիկոռուսական չովինիզմը վորպես առաջներում տիրապետող վելիկոռուսական աղգի անցած դասակարգերի ձգտում՝ վերադարձնելու իրենց կորցրած արտոնությունները և պայքարը նրա դեմ՝ վորպես գլխավոր վտանգի:

Տեղական չովինիզմը վորպես առաջներում մնչված աղգերի անցած դասակարգերի ձգտում՝ առանձնանալ իր աղգային պետության մեջ և հաստատել այնտեղ իր դասակարգային պետությունը:

Մանր-բուրժուական աղգայնական հակահեղափոխական կուսակցություններն ու կադմակերպությունները: Հայկական բուրժուազիայի կուսակցություն հակահեղափոխական զաչնակցությունը: Վրացական մենչեիկները: Մուսավաթիստները: Նբանք հույս են կապում կապիտալիստական Արևմուտքի և Արևելքի հետ: (Աղգային զորամասերի համար առանձնապես մանրամասն):

Հրյատեսցությունը (անտիսեմիտիզմը) և նրա դասակարգային եյությունը:

Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑՆԵՐ

1. Ինչպի՞սիք են բուրժուական պետության խնդիրներն ու քաղաքականությունը:

2. Ինչո՞ւմն է պրոլետարական դեմոկրատիայի արմատական տարբերությունը բուրժուական դեմոկրատիայից (որինակներով):

3. Ինչո՞ւմն է խրատահայտվում լրանվոր դասակարգի դեկավար դերը Խորհրդային պետության մեջ և ի՞նչու յե նա անհրաժեշտ:

4. Ինչո՞ւմն է արտահայտվում կուսակցության ղեկավարությունը խորհուրդների նկատմամբ և ի՞նչու առանց դրան հնարավոր չէ խորհրդային իշխանության գոյությունը:

5. Ինչպե՞ս է բանվորական պետությունը պայքարել և պայքարում կուլակության դեմ:

6. Ի՞նչ նշանակություն ունեն համատարած կոլեկտիվացման և կուլակության վորպես դասակարգի վերացման քաղաքականության հաջողությունները բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքն ամրացնելում:

7. Ինչո՞ւ կոլխոզային գյուղացիությունն այժմ հանդիսանում է խորհրդային իշխանության հիմնական և ամուր հենարանը գյուղում և հողագործության կենտրոնական դեմքը:

8. Վո՞րպիսիք են խորհուրդների գլխավոր խնդիրները ժամանակակից շրջանում:

9. Ինչպիսիք են կարմիր բանակայինի լրավումները վորպես ԽՍՀՄ քաղաքացի:

10. Ի՞նչ արտոնություններ են տրված կարմիր բանակայինին և նրա ընտանիքին:

11. Ինչպի՞սին է բուրժուական պետությունների աղգային քաղաքականությունը:

12. Ինչպի՞սին է խորհրդային պետության ազդային քաղաքականությունը (որինակներով ցույց տալուստեսական շինարարությունը, կուլտուրական շինարարությունը, ԽՍՀՄ սահմանադրությունը):

13. Ո՞վքեր են մեծապետական չովինիստները և տեղական նացիոնալիստները և ում հայացքներն են նրանք արտահայտում:

14. Ինչո՞ւ չէ անհրաժեշտ ամեն կերպ ամրացնել պրոլետարական պետությունը:

Գ) ԲԱՅԻ ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՅԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒՅ
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՊԵՏՔ Ե—

1) Իմանա խորհրդային սահմանադրության հիմունքների հետևյալ մասերը—ա) խորհուրդներում ընտրելու կարգը, բ) խորհրդային իշխանության կառուցվածքը (գյուղխորհուրդից քաղխորհուրդից մինչև ԽՍՀՄ Կենտգործկոմն ու Ժողկոմխորհը), գ) խորհրդային իշխանության բարձր մարմինները (Կենտգործկոմ և Ժողկոմխորհը)։

2) Իմանալ ինչ հանրապետություններ են մտնում ԽՍՀՄ մեջ, և կարողանալ ցույց տալ դրանք քարտեզի վրա։

3) Իմանալ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումները հեղափոխական որինականության և հասարակական սոցիալիստական սեփականության պահպանման մասին։

4) Իմանալ կարմիր բանակայինի և նրա ընտանիքի արտոնությունները:

Գ) ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՄԱՆ ՊՐՈՅԵՍՈՒՄ ՅՈՒՐԱ—
ԲԱՆՁՅՈՒՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԵՏՔ Ե ՄՏՅՆԻ
ԻՐ ՏԵՏՐԻ ՄԵՁ—

1) Քաղվածք ընկ. 1-ինինի ճառից՝ խորհրդային իշխանության դասակարգային էության մասին, վորը բերված է ներկա թեմայի 1-ին գլխի 1-ին հատվածում։

2) ընկ. Ստալինի խոսքերը կուսակցության գերիմասին, վորը բերված է ներկա թեմայի 2-րդ գլխի 2-րդ հատվածում.

3) քաղվածք 17-րդ կուսկոնֆերանսի բանաձևից յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդրի մասին.

4) քաղվածքներ իՍՀՄ սահմանադրությունից աղագային հարցի մասին կապիտալիստական յերկրներում և իՍՀՄում.

5) 9-րդ և 12-րդ կոնտրոլ հարցնրի պատասխանները.

6) ա) ինտերդային իշխանության կառուցվածքի սխեման՝ գյուղից ու քաղաքից մինչև իՍՀՄ, բ) համաթիւթենական, միացյալ և հանրապետական ժողկոմատները.

7) թվեր (հասարակ դիագրամա) ինտերդային իշխանության դեկալար մարմինների սոցիալական և կուսակցական կազմի մասին.

8) կարմիր բանակայինների և նրանց ընտանիքների հիմնական արտոնությունները:

III ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԻԾԸ (18-22 ԺԱՄ)

Ա) ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I. ԿՈՄՈՒՆԻՑՄԸ ԲԱՆԱՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԱՅՖԱՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ Ե (2 Ժամ)

Պրոլետարիատի ճնշումը կապիտալի յերկրներում, վորտեղ տիրապետում են կապիտալիստները, վորտեղ գործարանները, հողը, յերկաթուղիները պատկանում

են շահագործողների փոքրիկ խմբին (ընթացիկ կյանքի որինակներով):

Պատերազմների և ճգնաժամերի անխուսափելիությունը կապիտալիզմի պայմաններում, վորտեղ ամբողջ արտադրությունը տարվում է հոգուտ կապիտալիստների, վորտեղ կապիտալիստների մի խումբ հարստանում է ի հաշիվ միլիոնավոր աշխատավորների շահագործման ու աղքատացման:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, նրա հետևանքները կապիտալիստական յերկրների տնտեսության և աշխատավորության համար: Ժամանակակից որինակները, վորոնք ցույց են տալիս աշխատավորության իրավադրկությունն ու աղքատացումը (գործադրկություն, քաղց, աղքատություն, գյուղացիության քայքայում):

Դասակարգային կտաղի պայքարը կապիտալիստական իրավակարգում: Բանվոր դասակարգը վողջ աշխատավորության առաջնորդն է կապիտալիզմի ճնշչումից ազատագրվելու համար մղվող պայքարում: Բանվոր դասակարգի և նրա կուսակցության նպատակն է վողջադնել կապիտալիզմը և կառուցել կոմունիզմ, այսինքն՝ այնպիսի իրավակարգ, «ա» վորտեղ չի լինի արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականություն, այլ կլինի հասարակական, կոլեկտիվ սեփականություն, բ) վորտեղ չեն լինի դասակարգեր և պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի և և գյուղատնտեսության քրտնջան աշխատավորներ, վորոնք տնտեսապես կառավարվելու յեն իբրև աշխատավորների աղատ ասոցիացիա. գ) վորտեղ պլանով կազմակերպված ժողովրդական տնտեսությունը հիմ-

ներված կլինի բարձրագույն տեխնիկայի վրա ինչպե՞ս
ինդուստրիայի, այնպես եւ գյուղատնտեսութեան բնա-
գալաւորում. դ) վորտեղ չեն լինի հակադրութեաններ
քաղաքի և գյուղի միջև, ինդուստրիայի և գյուղատնտե-
սութեան միջև. յե) վորտեղ մթերքները կրաշխվեն հին
Փրանսիական կոմունիստների սկզբունքների համաձայն
«յուրաքանչյուրից ըստ ունակութեան, յուրաքանչյու-
րին ըստ կարիքի» . զ) վորտեղ գիտութեանն ու արվես-
տը ծաղկելու համար կոգտվեն բազմազան բարե-
նպաստ պայմաններից . ե) վորտեղ մարդն ազատ մի
կտոր հացի հոգսից և «աշխարհի ուժերներին» դուր դա-
լու անհրաժեշտութեանց կդառնա իրոք ազատ և այլն,
և այլն» (Ստալին) :

Նախքան լրիվ կոմունիզմ կառուցելը, հասարակու-
թեանը պետք է անցնի նրա առաջին աստիճանը—սոցիա-
լիզմը : Սոցիալիզմի պայմաններում մթերքները դեռ
բաժանվում են ըստ աշխատանքի, վորովհետեւ ար-
տադրական ուժերը դեռեւս այն չափով չեն զարգացած,
վորպեսզի հեշտացվի բաշխումն ըստ կարիքի :

«Չնայելով դասակարգելի վիճակացման, իրեւեւ
առկայում են հասարակութեան հին դասակարգային բա-
ժանման մնացորդները, հետևապէս և սրբոնտարիատի
պետական իշխանութեան մնացորդները, հարկադրումնե-
րը, իրավունքները, սակայն հին իրավակարգի այս
բոլոր մնացորդները չեն պաշտպանվում վոչ մի հասա-
րակական ուժի կողմից (կոմկոսների ծրագրերը) :

Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ
Խորհրդային Միութեան բանվոր դասակարգը տապալեց
կապիտալիստների իշխանութեանը և կառուցում է նոր
իրավակարգ : Մենք դեռեւս չենք կառուցել լրիվ սոցիա-

լիստական իրավակարգը : Մենք մտել ենք սոցիալիզմի
չբնաւոր և վերջնականապէս հաստատվել զարգացման
սոցիալիստական ուղիների վրա : Մեր իրավակարգը սո-
ցիալիստական իրավակարգ է, վորովհետեւ մեր յեր-
կըրում տապալում է կապիտալիստական դասակարգի
իշխանութեանը և փոխարինված բանվոր դասակարգի
իշխանութեամբ, արտադրութեան գործիքներն ու մի-
ջոցները, հողը, գործարանները և այլն խլում են կա-
պիտալիստներից և հանձնված բանվոր դասակարգի և
գյուղացիական աշխատավորական մասսաների սեփա-
կանութեան, արտադրութեանը տարվում է հողուտ աշ-
խատավորութեան շահերի :

Սոցիալիստական տնտեսութեան բոլոր անոմը մեզ
մոտ և կապիտալիստական տնտեսութեան անող ճորդ-
նաժամն ու անկումը սոցիալիստական յերկրի առաջե-
լութեանների ամենափայլուն, ապացույցներն են հան-
դես կապիտալիստականի :

II. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼՆՆԻՆ- ՅԱՆ ՊԼԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ (4 ժամ)

1. Սոցիալիստական շինարարութեան լենինյան
պլանը : Լենինը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման մեծ
պլանի հիմնադրիչն է : Լենինյան ուսմունքն այն մասին,
թե մեր յերկրում կա բոլոր անհրաժեշտն ու հարկավորը
սոցիալիստական իրավակարգ կառուցելու համար և
վոր սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում ամբող-
ջապէս կախված է բայլեիկյան կուսակցութեան ճիշտ
քաղաքականութեանից :

Սոցիալիստական ինդուստրիայումը սոցիալիզմի կա-
ռուցման լենինյան պլանի, կուսակցության գլխավոր
գծի հիմքն է: Լենինի ցուցմունքները ծանր արդյունա-
բերության և երկտրոֆիկացիայի մասին, վորպես
վողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վե-
րակառուցման լծակների մասին:

«Սոցիալիզմի նյութական հիմքը կարող է լինել
միմիայն խոշոր արդյունաբերությունը, վորն ընդու-
նակ և վերակազմել նաև հողադործությունը» (Լենին):

Գյուղատնտեսության մանրացումն ու հետամնա-
ցությունը ցարական Ռուսաստանում: Ծանր արդյու-
նաբերությունը զենք է գյուղացիական հետամնաց,
մանր տնտեսությունները վերակազմելու խոշոր, առա-
ջավոր, մեքենայացված սոցիալիստական գյուղատնտե-
սություն: Լենինի ցուցմունքները գյուղացիական մանր
և մանրագույն տնտեսությունների կոոպերացման, կո-
լեկտիվացման մասին, վորպես գյուղատնտեսության
սոցիալիստական վերակազմության հիմնական ուղիներ-
ի մասին:

Բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյու-
ղացիության հետ, բանվոր դասակարգի գյուղացիու-
թյան ղեկավարելը—գյուղացիական մանր տնտեսու-
թյունները խոշոր սոցիալիստականի վերածելու քաղա-
քականության հիմքն է: Գյուղի մատակարարումն ար-
դյունաբերական ապրանքներով, մեքենաներով, գոր-
ծիքներով ու արտադրության միջոցներով առաջին
հերթին—այդ քաղաքականության արտահայտությունն
է: Արտադրական և առևտրական զուգումը:

Լենինի ցուցմունքն այն մասին, վոր սոցիալիզմի
բողոքը ԽՍՀՄ-ում կախված է մեր տնտեսության մեջ
սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայ-
քարի յեղբայր, նրանից «ով-ում» կհաղթե այդ պայքա-
րում, և վոր մեր հիմնական խնդիրն է այդ պայքա-
րում աշխատավոր գյուղացիությանը տանել դարգաց-
ման սոցիալիստական ուղիներով, բանվոր դասակարգի
յեղբայր:

Նեպոլ լենինյան քաղաքականություն է, վորը հաշ-
ված է սոցիալիստական տարրերի կապիտալիստականի
դեմ մղվող պայքարի վրա, սոցիալիստական տարրերի
հաղթանակի վրա ընդդեմ կապիտալիստականների,
ԽՍՀՄ-ում սոցիալիստական եկանոմիկայի հիմքի կա-
ռուցումն ալաբատելու վրա:

Լենինի ցուցմունքները սոցիալիստական շինարա-
րության արագ տեմպերի հսկայական նշանակության
մասին հաղթանակելու համար դասակարգային թշնա-
մուն յերկրի ներսում, հաղթանակելու համար համաշ-
խարհային իմպերիալիզմին: Լենինի դրած խնդիրն է.
դարգացնել սոցիալիստական շինարարության այնպի-
սի տեմպեր, վորպեսդի տեխնիկական տեսակետից կա-
րողանանք ամենակարճ ժամանակամիջոցում հասնել ու
անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին:

2. Մեր հաջողությունները սոցիալիստական շինա-
րարության լենինյան պլանի կենսագործման մեջ: Կու-
սակցության կողմից լենինյան գծի անշեղ կիրառումը
յերկրի ինդուստրիացման, ծանր արդյունաբերության
զարգացման դործում, անհաշտ պայքարում ընդդեմ
դասակարգային թշնամու և ոպորտունիստների:

3. Մեր դժվարութիւնները մասին: Լենինը մեր սոցիալիստական շինարարութեան դժվարութիւնները և այդ դժվարութիւնները հաղթահարելու ուղիների մասին:

Լենինի վճռական պայքարն այն ուղորտունիստների դեմ, վորոնք վայր են դնում զենքերը դժվարութիւնների առաջ, այդպիսիք բայլչեկիորեն հաղթահարելու փոխարեն:

Լենինյան կենտկոմի և կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարութեամբ այն բոլոր դժվարութիւնների վճռական հաղթահարումը, վորոնք հանդիպում են սոցիալիստական շինարարութեան ճանապարհին, կուսակցութեան գլխավոր գծի հաստատ կիրառման և ուղորտունիստների դեմ մղվող պայքարի հիման վրա:

Մեր դժվարութիւնների հիմնական տարրերութիւնը կապիտալիզմի դժվարութիւններն են: Կապիտալիզմի դժվարութիւնները կապիտալիստական սկստեմի անկման ու քայքայման դժվարութիւններն են: Մեր դժվարութիւնները—մեր ժողովրդական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման դժվարութիւնները: Մեր դժվարութիւնները—սոցիալիստական շինարարութեան հաջողութիւններին ընդդէմացող դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարի դժվարութիւններն են: Կուսակցութեան գլխավոր գծի անչեղ կիրառումը, դասակարգային թշնամու և նրա դժբախտները—ուղորտունիստների, մանավանդ աջ թեքման դեմ, վորպէս տվյալ շրջանի գլխավոր վտանգի դեմ մղվող անհաշտ պայքարը—միակ ճանապարհն է մեր դժվարութիւնները հաղթահարելու համար:

Ժամանակակից դժվարութիւնները մատակարարման մեջ, նրանց պատճառները և այնպիսիք հաղթահարելու միջոցները: Կուսակցութիւնն ինչպէս է մասնաաներին մոբիլիզացիայի յենթարկում դժվարութիւնները հաղթահարելու համար: Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի վորոշումները լայն սպառման առարկաների արտադրութիւնը և խորհրդային կոլտնտեսական առևտուրը ծախսելու մասին: Պայքարը սպեկուլյանտների դեմ:

III. ՅԵՐԿՐՈՐԴ ԷՆԳԱՄՅԱԿԸ (6 ժամ)

1. Յերկրորդ հեգամյակի իմնական քաղաքական խնդիրը: Առաջին հեգամյակը ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հիմքի կառուցումն ավարտելու հեգամյակ էր: Յերկրորդ հեգամյակը—անդասակարգ սոցիալիստական իրավակարգ կառուցելու պլան:

«Յերկրորդ հեգամյակի հիմնական քաղաքական խնդիրը հանդիսանում է կապիտալիստական տարրերի և ընդհանրապէս դասակարգերի վերջնական վերացումը, և նրանց պատճառների լիակատար վոչնչացումը, վորոնք այն պատճառների լիակատար վոչնչացում են դասակարգային տարրերութիւններ և առաջացնում են դասակարգային և մարդկանց դիտակցութեան մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարութեան մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարութեան մեջ կապիտալիզմի մնացորդների հաղթահարութեան անդաստեղծումը, վորով աշխատավոր ազգաբնակչութիւնն անդաստեղծ կարգ սոցիալիստական իրավակարգ կառուցելու գլխարկը և ակտիվ մարտիկների վերածելը» (XVII կուստակից և ակտիվ մարտիկների վերածելը) (XVII կուստակից և ակտիվ մարտիկների վերածելը): Այդ խնդրի համաշխարհային պատմական նշանակութիւնը:

Շահագործող տարրերի վոչնչացումը վճռական խնդիր և ԽՍՀՄ-ում դասակարգերը վերացնելու գործում, վորովհետև առանց շահագործողների չկան շահագործվողներ: Մեր հաջողութուններն այդ խնդրի լուծման մեջ. կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու հիմնականում ավարտելը ԽՍՀՄ-ի վճռական գյուղատնտեսական շրջաններում, «ովում» հարցի լուծումը հողատ սոցիալիզմի յերկրի ներսում: 1932-33 թ. համատարած կոլեկտիվացումը հիմնականում ամբողջ յերկրում ավարտելու խնդիրը և դրա հիման վրա հիմնականում վերացնել կուլակությունը վորպես դասակարգ ամբողջ յերկրում:

Դասակարգերի վոչնչացումը և աշխատավորների վերադաստիարակման խնդիրները: Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդումը— աշխատանքի ճիշտ կազմակերպումը, պայքարը հասարակության դեմ յեկամուտների բաշխման գործում և այլն. կոլտնտեսականների սոցիալիստական վերադաստիարակման կարևորագույն ուղին և, գյուղատնտեսության հետագա սոցիալիստական հաջող վերակազմության կարևորագույն ուղին և դրա հիման վրա յերկրորդ հնգամյակում բոլոր պայմանները ստեղծելու ուղին, վորոնք ապահովելու յեն քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրությունների վոչնչացումը: Սոցիալիստական մրցակցության և հարվածայնության հետագա ծավալումը, վորպես աշխատավորներին վերադաստիարակելու միջոց, վորն ստեղծելու յե մարդկանց նոր սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքը: Սոցմրցակցության և ընկ. Ստալինի վեց պայմանների դերը մեր արդյունաբերության մեջ ներդրավող բանվորական

նոր կադրերի վերադաստիարակման գործում (պայքար հավասարեցման դեմ, բանվորական մասնագետների կադրեր ստեղծում և այլն):

Կուլտուրական շինարարություն և նրա դերը աշխատավորության վերադաստիարակման գործում: Ընդհանուր պարտադիր ուսուցումը վորպես կարևորագույն հանուր պարտադիր ուսուցումը վորպես աշխատանքի միջև յեղած հակադրությունները:

Կարմիր բանակի դերն աշխատավորության վերադաստիարակման գործում: Կարմիր բանակն առաջնակարգ քաղաքական դպրոց և: Դասակարգերի վոչնչացման անկադրելիությունն առանց անողոր դասակարգային պայքարի: Դասակարգային թշնամու կատաղի դիմադրությունը սոցիալիզմի հաջող արշավին ամբողջ ճակատում:

Դասակարգային թշնամու պայքարի մեթոդները սոցիալիզմ կառուցող բանվորական պետության դեմ. վնասարարություն, կուլակության քայքայիչ աշխատանքը կոլեկտիվացման, հացամթերումների դեմ, պետական և կոլտնտեսական դուլբի հափշտակումը, սպեկուլյացիա և այլն:

Դասակարգային պայքարը յերկրորդ հնգամյակում: «Հետագայում դեռևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներին և առանձին սոցիալիստական շինարարության առանձին շրջաններում և առանձին ճակատամասերում, վոր նրա հետ միասին ընդգծում և աշխատավորական առանձին խավերի և խմբերի վրա բուրժուազիայի ազդեցության վերի և խմբերի վրա բուրժուազիայի ազդեցության պահպանություն, իսկ մի քանի դեպքերում նաև ուժեղացման անխուսափելիությունը, դեռևս յերկար ժա-

ժամակ արդիւտարիաւորին ոտաւ դասակարգային ադ-
դեցութիւններէ բանվորութեան, նուազիկ կուտակցու-
թեան մեջ թափանցելու անխուսափելիութիւնը» (XVII
կուսկոնֆերենցիա): Կուլակային հակահեղափոխու-
թեան դիրքերը գլորված ալ ոպորտունիստներէ հայացք-
ները, դասակարգային պայքարի հանդէսն մասին—
դասակարգային թշնամու հայացքներն են:

Բանվորական պետութիւնն ամեն կերպ ամրապն-
դելու անհրաժեշտութիւնը, վորպէս մեր յերկրում դա-
սակարգային թշնամուն վռնչացնելու, աշխատավորու-
թեանը վերադաստիարակելու և անդասակարգ սոցիա-
լիստական իրավակարգ կարգուցելու գնը:

2. Յերկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական
խնդիրը: Վողջ ժողովրդական տնտեսութեան տեխնիկա-
կան վերակառուցման ավարտումը, յերկրորդ հնգամ-
յակի հիմնական տնտեսական խնդիրն է:

Յերկրորդ հնգամյակի հիմնական տնտեսական
խնդիրներն իրադրուելու համար վողջ ժողովրդական
տնտեսութեան— արդյունաբերութեան, տրանսպորտի,
գյուղատնտեսութեան ծախարուն տեխնիկական վերակա-
ռուցման անհրաժեշտութիւնը:

Յերկրորդ հնգամյակի ընթացքում մեր տնտեսու-
թիւնը պետք է զինված լինի ամենաառաջավոր, ամե-
նանորագույն մեքենայական տեխնիկայով:

Խորհրդային մեքենաշինարարութեան առաջատար
գերը ժողովրդական տնտեսութեան տեխնիկական վերա-
կառուցման դործում: Մեքենաշինարարութեան բնագա-
վառում դրված խնդիրները:

Նորագույն ենթակառուցի բաղադրի ստեղծումը, հիմ-
նրված արդյունաբերութեան և տրանսպորտի լայնորեն
ելեկտրոֆիկացիայի յենթարկելու վրա, ելեկտրոններ-
գիւմի գյուղատնտեսութեան մեջ աստիճանաբար ար-
մատացնելու և ջրային եներգիւյի, քարածուխի, նավ-
թի, տեղական վառելանյութերի հսկայական պաշար-
ներն ոգտադրուելու վրա: Ելեկտրոններգիւյի արտա-
դրութեան և քարածուխի ու նավթի հանույթի խնդիր-
ները:

Խնդիրներ մետաղի հանույթի բնագավառում: Մե-
տաղի նշանակութիւնը ժողովրդական տնտեսութեան և
յերկրի պաշտպանութեան համար: Մեր նվաճումները սե-
մետաղագործութեան զարգացման մեջ: Սե մետաղա-
գործութեան յետամնացութիւնը ժողովրդական տնտե-
սութեան պահանջներէ, սե մետաղագործութեան զար-
գացման պլանի թերակատարումը: Կենտրոնի սեպտեմ-
բերյան պլանումի վորոշումները սե մետաղագործու-
թեան մասին: Յերկրորդ հնգամյակի նպատակադրումը
սե մետաղագործութեան և գունավոր մետաղների զար-
գացման բնագավառում:

Խնդիրներ տրանսպորտի բնագավառում: Տրան-
սպորտը ժողովրդական տնտեսութեան նեղ տեղն է:
Յերկրորդ հնգամյակը տրանսպորտի արմատական վե-
րակառուցման հնգամյակն է վողջ ժողովրդական տնտե-
սութեան վերակառուցման խնդիրներէ համապատաս-
խան: Յերկաթուղային և ջրային տրանսպորտի, ճա-
նապարհների և խճուղիների շինարարութեան զարգաց-
ման խնդիրները: Ողային հաղորդակցութեան զարգա-
ցումը:

հնդիրներ գյուղատնտեսութեան վերակառուցման
բնագաւառում: Յերկրորդ հնգամյակը գյուղատնտե-
սութեան տեխնիկական վերակառուցման հնգամյակն է:
Յերկրորդ հնգամյակի վերջում մեքենա-տրակտորային
կայանները կրնողընեն բոլոր կոլտնտեսութիւնները և
հիմնականում կաւարտեն գյուղատնտեսական արտա-
դրութեան մեքենայացումը:

Յերկրորդ հնգամյակի կարևորագույն խնդիրը՝
բերքատուութեան մեծական բարձրացումն է և յերաշտի
զեմ պայքարի հարցի բայլչեիկյան լուծումը: Ժողկոմ-
խորհի սեպտեմբերի 29-ի վորոշումը բերքատուութեան
բարձրացման միջոցառումների մասին: Մնասնապա-
հովթեան խնդրի լուծումը գյուղատնտեսութեան կա-
րևորագույն խնդիրն է յերկրորդ հնգամյակում:

Խորհտնտեսութիւնների շինարարութեան խնդիր-
ները յերկրորդ հնգամյակում: Յերկրորդ հնգամյակում
գյուղատնտեսութեան վերակառուցման մասին XVII
կուսկոնֆերենցիայի վորոշումների մեծագույն նշանա-
կութիւնը: «Գյուղատնտեսութեան լիակատար կոլեկ-
տիւացումը, պետական գյուղատնտեսական խոշոր ձեռ-
նարկների աճումը և խորհտնտեսութիւնների ու կոլ-
տնտեսութիւնների առաջավոր մեքենայական տեխնի-
կայով զինվելը, վորը գործնականում գյուղատնտեսա-
կան աշխատանքը վեր է ածում ինդուստրիալ աշխատան-
քի զանազանակերպութեան, և տրանսպորտի կապի ու
ապրանքաշրջանառութեան նշանակալի ուժեղացումը
արդիւնաբերութեան և գյուղատնտեսութեան միջև,
պայմաններ են ստեղծում լիովին վերացնելու համար
քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրութիւնները»
(XVII կուսկոնֆերենցիա):

Աշխատավորութեան բարեկեցութեան բարելավումը
և քեքեւ արդիւնաբերութեան խնդիրները: Աշխատաւո-
րութեան բարեկեցութիւնը բարելավելու վերաբերյալ
XVII կուսկոնֆերենցիայի վորոշումներով դրված հըս-
կայական խնդիրները:

«Աղդաբնակութեան հիմնական սպառման ապրանք-
ներով, նրա թվում նաև սննդի առարկաներով ապահո-
վելը յերկրորդ հնգամյակի վերջում պետք է ավելանա
վոչ պակաս 2—3 անգամ, առաջին հնգամյակի վերջի
հանդեպ»:

Թեթև արդիւնաբերութեան և հումուլթի բազայի
արագ զարգացումը, վորպես այդ խնդրի կատարման
կարևորագույն պայման: «Մեր արդիւնաբերութեան
մեջ նորն ի միջի այլոց կայանում է նրանում, վոր մենք
այժմ հնարավորութիւն ունենք արագ տեմպով զար-
գացնել և՛ ծանր և՛ թեթև արդիւնաբերութիւնը»
(Ստալին): Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի վորո-
շումները լայն սպառման առարկաների արտադրութեան
մասին: Այդ բնագաւառում ծանր արդիւնաբերու-
թեան, թեթև արդիւնաբերութեան, կոտլերացիայի
առաջ դրված խնդիրները:

Աշխատավորութեան բարեկեցութիւնը բարելավե-
լու համար խորհրդային և մասնավորապես կոլտնտեսա-
կան առևտրի ծավալման հսկայական նշանակութիւնը:

«Միայն ապրանքաշրջանառութեան ծավալման հի-
ման վրա հնարավոր է ապահովել բանվորների և գյու-
ղի աշխատավորների մատակարարման հետագա արագ
բարելավումն արդիւնաբերական ապրանքներով ու
գյուղատնտեսական մթերքներով, վորի համար իր
հերթին անհրաժեշտ է ամեն կերպ ընդարձակել խա-

նութներ, կրպակներ և ամբողջ առևտրական կետերի ցանցը, անհրաժեշտ տեխնիկական վերակառուցման յենթարկելու ամեն Վրացի դրա հիման վրա հնարավոր և պատրաստել ապրանքների չափավորված բաց թողնելու վերացումը և ծավալուն խորհրդային առևտրի միջոցով փոխարինել բաշխման կենտրոնացած սխեման» (XVII կուսկոնֆերենցիայի վորոշումները) :

Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի վորոշումները խորհրդային և մասնավորապես կոլտնտեսական առևտրի հետագա ծավալման մասին, արդյունաբերության, կոոպերացիայի, պետառևտրի աշխատանքների բարելավման մասին խորհրդային առևտրի կազմակերպման գործում :

Յերկրորդ հնդամյակը վճռական հաղթանակների հնդամյակ և ԽՍՀՄ-ի կապիտալիստական աշխարհից տնտեսական անկախության համար մղվող պայքարում. «մոտակա տաս տարում տեխնիկա-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» նշանաբանի կատարման համար մղվող պայքարում : «ԽՍՀՄ-ն յերկրորդ հնդամյակում, տեխնիկական տեսակետից, անցնում և ատալին տեղը Յեվրոպայում : ԽՍՀՄ-ն մեքենաներ և սարքավորում ներմուծող յերկրից, ինքնուրույն մեքենաներ ու սարքավորում արտադրող յերկրի վերածելու ծավալած աշխատանքն առաջին հնդամյակում կավարտվի և վերջնականապես կապահովի ԽՍՀՄ-ի տնտեսական անկախությունը, վորը կպաշտպանի ԽՍՀՄ-ն կապիտալիստական համաշխարհային տնտեսության ավելցուկը դառնալուց» (XVII կուսկոնֆերենցիա) :

XVII կուսկոնֆերենցիայի յերկրորդ հնդամյակում դրած խնդիրները վիթխարիությունը և այդ խնդիրները կատարելու հնարավորությունը միմիայն աշխատանքի արտադրողականության բարձրացման հիման վրա վորը ժողովրդական տնտեսության մեջ, բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների ամբողջ ստեղծագործական ուժերի մորթիլիցացիայի և մեծագույն ենտուզիադմի, սոցիալիստական մրցակցության և հարվածայնության ծավալման հիման վրա :

Յերկրորդ հնդամյակի հսկայական խնդիրները կարող են լուծվել միայն կատաղի պայքարում ընդդեմ դասակարգային թշնամու և նրա ադենտուրայի—ամեն գույնի ոպորտունիստների և առանձնապես աջ թեքման, վորպես գլխավոր վտանգի :

IV. ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ՅԵՎ ԸՆԿ. ՍՏԱ-
ԼԻՆԻ ՎԵՅ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (2 ժամ)

1. Թերություններ սոցիալիստական արդյունաբերության աշխատանքում : Իր բոլոր նվաճումների հետ միասին մեր սոցիալիստական արդյունաբերության աշխատանքը ունի մի չարք խոչորագույն թերություններ ու բացեր : Այդ բացերից կարևորագույններն են. արդյունաբերական մի չարք ճյուղերի սլանների թերակատարումը, սլանի վորակական ցուցանիշների թերակատարումը, աշխատանքի արտադրողականության անբավարար լինելը, ինքնարժեքի անբավար լինելումը, արտադրանքի վատ վորակը :

Լենինն աշխատանքի արտադրողականության նշանակության մասին ժողովրդական տնտեսության և աշխատավորության դրությունը բարելավելու համար :

Պլաններն թերակատարման և աշխատանքի անբա-
վարար արտադրողականության հիմնական պատճառ-
ներն են—աշխատանքի նոր պայմանների համեմատ նոր
ձևով աշխատել, նոր ձևով ղեկավարել չիմանալը:

2. Ընկ. Ստալինի վեց պայմանները: Աշխատանքի
արտադրողականության բարձրացման, սոցիալիստական
չինարարության բնադավառում մեր աշխատանքների
բոլոր թերությունները վերացնելու բանալին, ընկ.
Ստալինի վեց պայմաններն են: Ընկ. Ստալինի վեց պայ-
մանները, 1) արդյունաբերության կազմակերպված ա-
պահովումը բանվորական ուժով արդյունաբերական
միավորումների կոլտնտեսությունների հետ կնքած
պայմանագրերի միջոցով և աշխատանքի մեքենայացում, 2)
համադրվողական վերացումն աշխատավարձում, 3)
գիմարդկության վոչնչացումը և բանվորների նյութա-
կան և կուլտուրական մակարդակի բարելավումը, 4) պրո-
լետարական տեխնիկական կադրերի ստեղծումը, 5)
հին տեխնիկական կադրերի ավելի համարձակ ոգտա-
դործումը, դեպի նրանց վերաբերմունքի փոխումը, 6)
տնտեսական հաշվարկի կիրառումը:

Ընկ. Ստալինի այդ վեց պայմաններից յուրաքան-
չյուրի նշանակությունը: Փաստեր, վորոնք ցույց են
տալիս, թե ինչպես է դնում պայքարը ընկ. Ստալինի
վեց պայմանների իրագործման համար դործարանների
աշխատանքում:

Ընկ. Ստալինի վեց պայմանները խորհտնտեսու-
թյան և ՄՏԿ-ի աշխատանքներում:

Ընկ. Ստալինի վեց պայմանների անչեղ կիրառումը
պայքարն ռպրտունիղմի դեմ, վորը ձախողում է նրանց
կիրառումը, վորպես արմատական խնդիր, վորի լու-

ծումից է կտրված յերկրորդ հնգամյակի խնդիրների
կատարումը:

3. Տիրապետում ենք տեխնիկային: Ընկ. Ստալինի
դրած խնդրի նշանակությունը «բայլեիկները պետք է
տիրապետեն տեխնիկային», վորպես ժամանակակից
չրջանի վճռական խնդիր, վորովհետև «վերակառուցման
չրջանում տեխնիկան վճռում է ամեն ինչ»:

Տեխնիկային տիրապետելու խնդրի մեծադույն նշա-
նակությունը ժողովրդական տնտեսության տեխնիկա-
կան վերակառուցման պլանի կատարման համար յերկ-
րորդ հնգամյակում:

Վ. ԿՈԼՏԵՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱ- ԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (6 ժամ)

1. Կոլտնտեսությունների կազմակերպչական-տըմ-
տեղական ամրապնդումը: Կոլտնտեսությունների կադ-
մակերպչական-տնտեսական ամրապնդումը վորպես
ընկ. Ստալինի վեց պայմանների կիրառումը կոլտնտե-
սական չինարարության դործում: Կոլտնտեսություն-
ների կազմակերպչական-տնտեսական ամրապնդումը—
գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման
կենտրոնական խնդիրն է, գյուղատնտեսությունից աշխա-
տանքի արտադրողականության բարձրացման հիմնա-
կան ուղին:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտե-
սական ամրապնդումը վորպես կոլտնտեսականների սո-
ցիալիստական վերադաստիարակման, կապիտալիզմի
մնացորդների և կուլակային աղբեցությունների դեմ
պայքարի կարևորագույն լծակ:

2. Գյուղատնտեսական արտելը կոլտնտեսությունների հիմնական ձևն է ժամանակակից շրջանում: Արտելը տնտեսութան սոցիալիստական ձևն է: Արտելում կամովին միացված են բատրակները, չքավորներն ու միջակները, «վորպեսդի արտադրության ընդհանուր միջոցներով և ընդհանուր կազմակերպված աշխատանքով կազմակերպել խոշոր կոլեկտիվ տնտեսություն և այդպիսով ապահովել իրական և լիակատար հաղթանակը կուլակի դեմ, բոլոր շահագործողների և աշխատավորության թշնամիների դեմ, լրիվ հաղթանակը կարելի է խափարի դեմ, մանր մենատնտեսության յետամնացության դեմ և ստեղծել աշխատանքի բարձր արտադրողականություն և կոլեկտիվ տնտեսության ասպրանքայնություն» (գյուղատնտեսական արտելի կանոնադրություն):

«Գյուղատնտեսական արտելում համայնացված են արտադրության հիմնական միջոցները, գլխավորապես հացահատիկային տնտեսության մեջ. աշխատանք, հողորոգողություն, մեքենաներ և այլ ինվենտար (բանվոր անասուն, տնտեսական շենքեր): Նրանում չեն համայնացվում տնտեսողերին կից հողերը (մանր բանաջարանոցները, պարտեզները) բնակելի շենքերը, կաթնատու անասունների վորոշ մասը, մանր անասունները, ընտանի թռչունները և այլն» (Ստալին): Գյուղատնտեսական արտելի ձևն առաջադրված է աշխատավոր-գյուղացիության լայն մասսաների կողմից, վորոքս ավելի համապատասխան ձև իր հիմնական շահերին. միլիոնավորներին վորո՞՞ք նրանում հաստատված է կոլտնտեսա-

կանի և ամբողջապես կոլտնտեսություն շահերի ղուգակցումը կոլտնտեսական-գյուղացու մասնավոր շահերի հետ:

Արտելի տարբերությունը կոմունայից և կուսակցության վճռական պայքարը «ձախ» ուղորտունիստների դեմ, վորոնք աշխատում են արտելն անմիջապես վերածել կոմունայի: Կենտկոմի մարտի 26-ի վորոշումը կոլտնտեսականների կողմից ու մանր յեղջյուրավոր անասունները հարկադրաբար համայնացնելու դեմ պայքարի մասին: Կոլտնտեսականների կողմից ու մանր յեղջյուրավոր անասունները հարկադրաբար համայնացնելու քաղաքականությունը — դասակարգայնորեն ոտար քաղաքականություն է:

Արտելի տարբերությունը, վորտեղ արտադրության միջոցները պատկանում են իրենց կոլտնտեսականներին, խորհրդատնտեսություններից, վորոնք սլետական ձեռնարկներ են և վորտեղ արտադրության միջոցները պատկանում են պետությանը:

• Կուսակցության վճռական պայքարն ուղորտունիստներին դեմ, վորոնք վորո՞՞ն են կոլտնտեսությունների նկատմամբ հրամանատարության մեթոդներ դորեն կատամար հրամանատարության մեթոդներ դեկավար աշխատող-ծաղրել: Կոլտնտեսություններին դեկավար աշխատողներին, առանց վերադաս կազմակերպություններին թույլտվության, տեղական մարմինների կողմից աշխատանքից հանելու արգելումը: Համկոմկուսի Կենտկոմի 1932 թ. փետրվարի 4-ի վորոշումը: Կենտգործկոմի վորոշումը կոլտնտեսական սեփականությունը պահպանելու մասին, նրանց չլիանացման և ամբապնդման մասին:

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը կոլտնտեսու-
թյունների կազմակերպչական-տնտեսական ամրապնդ-
ման կարևորագույն ողակն է: Կի-ի փետրվարի 4-ի վո-
րոշումը և Կոլտնտեսությունի փետրվարի 11-ի հրահան-
գը: Տնտհաշվարկային բրիգադը կոլտնտեսության մեջ,
նրա կազմակերպման կարգը, բրիգադի կազմը, բրիգա-
դիւնների ընտրությունը: Բրիգադին տրվող առաջա-
դրանքը, նրա աշխատանքի կազմակերպման կարգը:
Պայքարը կորուստների դեմ: Կոլտնտեսություններում
աշխատանքի ճիշտ և վոչ ճիշտ կազմակերպման փաս-
տերը:

Յեկամուտների բաշխումը կոլտնտեսություններում
և նրա նշանակութունը կոլտնտեսությունների կազմա-
կերպչական-տնտեսական ամրապնդման համար: Պայ-
քար կուլակային հավասարեցման դեմ: Գործավարձի
արմատացումը և կոլտնտեսություններում նրա կիրառ-
ման առանձնահատկությունները: Աշխատանքի գնա-
հատման կարգը, կոլտնտեսականի աշխուրի հաշվառու-
մը: Կոլտնտեսության մեջ յեկամուտների ճիշտ և վոչ
ճիշտ բաշխելու փաստերը:

Աշխատանքի և յեկամուտների բաշխման ճիշտ կազ-
մակերպումը կարևորագույն զենքն և կոլտնտեսականնե-
րի սոցիալիստական վերադաստիարակման, աշխա-
տանքային բարձր կարգապահության, կոլտնտեսու-
թյունների աշխատանքներում պլանայնության համար
մղվող պայքարում:

Կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտե-
սական ամրապնդումը և կոլտնտեսական անասնապա-
հության զարգացման խնդիրները (կոլտնտեսական ֆեր-
մաների կազմակերպումը, կովեր և մանր յեղջյուրա-

վոր անասուններ ձեռք բերելու գործում առանձին կոր-
տնտեսականներին ողենը և այլն): Պայքար ամբողջ
կաթնատու անասունները հարկադրաբար համայնաց-
նելու «ձախերի» պրակտիկայի դեմ:

Կոլտնտեսական ակտիվի առաջնաշումը և դաստիա-
րակումը:

3. Հացամթերումներ, գյուղիարկ և կոլտնտես-
կան առևտուր: Կուսակցության և կառավարության վո-
րոշումները հացամթերումների, գյուղհարկի և կոլ-
տնտեսական առևտրի մասին: Հացամթերումների պլա-
նի իջեցումը 1932—33 թ. և կոլտնտեսականին և աշխա-
տավոր մեկնատնտեսին իրավունք տալը վաճառելու ի-
րեն հառանելիք հացահատիկի մասը պետության հան-
դեպ ունեցած պարտականությունը կատարելուց հետո,
նաև անասնապահության մթերքները, պետության
հանդեպ ունեցած պարտականությունները ձեռապա-
հորեն կատարելու դեպքում, վաճառել շուկայում յե-
ղած գներով: Կենտրոնիկումի վորոշումը մասամբերում-
ների մասին և նրա նշանակությունը:

Կոլտնտեսական առևտրի ծավալման հսկայական
նշանակութունը կոլտնտեսությունների կազմակերպ-
չական-տնտեսական ամրապնդման և աշխատավորու-
թյան մատակարարումը բարելավելու գործում: Կառա-
վարության վորոշումը կոլտնտեսական առևտրի ծա-
վալման մասին: Անհատ պայքարի անհրաժեշտություն-
ը սպեկուլյանտներին կուլակների և մասնավոր ա-
ռևտրականների դեմ, վորոնք փորձում են ողտվել ի հա-
շիվ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիու-
թյան: Կառավարության և կուսակցության վորոշում-
ները սպեկուլյացիայի դեմ պայքարի մասին:

Գոյտնտեսական առևտրի ծախսերումը և գյուղին արդյունաբերական ապրանքներ մատակարարելու խնդիրները: ԿԿ-ի սեպտեմբերյան պլենումի վորոշումները խորհրդային առևտրի և լայն սպառման առարկաների արտադրութայն մասին:

Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչու կապիտալիզմի պայմաններում բանվոր դասակարգը ճնշված դասակարգ է:

2. Ի՞նչու կապիտալիզմի պայմաններում անխուսափելի յեն ճգնաժամերը և վորոնք են նրանց հետևանքներն աշխատավորութայն համար:

3. Ի՞նչ է կոմունիզմը:

4. Ի՞նչով է տարբերվում սոցիալիզմը կոմունիզմից:

5. Ի՞նչու մեր իրավակարգը սոցիալիստական իրավակարգ է:

6. Վո՞ր փաստերն են խոսում սոցիալիստական սիստեմի հակայական առաւելությունների մասին կապիտալիստականի հանդեպ:

7. Ի՞նչու սոցիալիստական ինդուստրացումը հանդիսանում է սոցիալիզմի կառուցման հիմքը և ի՞նչպես ենք մենք կատարում Լենինի ավանդները սոցիալիստական ինդուստրացման մասին (փաստերով):

8. Ի՞նչու կոլեկտիվացումը հանդիսանում է գյուղատնտեսութայն սոցիալիստական վերակառուցման հիմնական ուղին և ի՞նչպես ենք մենք կատարում լենինյան ավանդը գյուղատնտեսութայն սոցիալիստական վերակառուցման մասին:

9. Ի՞նչումն է կայանում «ով-ումը» հարցի ելությունը և վո՞ր փաստերն են վկայում այն մասին, վոր

այդ հարցը յերկրի ներսում վճռված է հողում սոցիալիզմի:

10. Ի՞նչպիսի փաստերով կարելի յե հաստատել, վոր մեր յերկիրը թեակոխել է սոցիալիզմի շրջանը և, վոր իՍՀՄ-ն վերջնականապես հաստատվել է զարգացման սոցիալիստական ճանապարհի վրա:

11. Ի՞նչու մենք պայքարում ենք սոցիալիստական շինարարութայն արագ տեմպերի համար:

12. Ի՞նչով են տարբերվում մեր դժվարությունները կապիտալիզմի դժվարություններից և վո՞րոնք են նրանց հաղթահարելու ուղիները:

13. Վո՞րն է յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը:

14. Ի՞նչ հաջողություններ ունենք մենք անդամակարգ սոցիալիստական իրավակարգի ստեղծելու և դասակարգային ճնշումը վոջնացնելու ասպարեղում:

15. Ի՞նչու շահագործող տարրերի վերջնական վոջնացումը վճռական խնդիր է իՍՀՄ-ում դասակարգերը վոջնացնելու գործում:

16. Ի՞նչու առանց անողոր դասակարգային պայքարի հնարավոր չե անդամակարգ սոցիալիստական իրավակարգ կառուցել:

17. Ի՞նչումն է արտահայտվում ներկա շրջանում դասակարգային պայքարը և ի՞նչում նա կարտահայտվի յերկրորդ հնգամյակի ընթացքում:

18. Ի՞նչու անհրաժեշտ է ամեն կերպ ամրացնել պրոլետարական պետությունը:

19. Վո՞րն է յերկրորդ հնգամյակի հիմնական տեմպական խնդիրը:

20. Ի՞նչու յերկրորդ հնդամյակի հիմնական քաղաքական խնդրի կատարումը—անդասակարգ սոցիալիստական իրավակարգի կառուցումը—հնարավոր է միայն վողջ Ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման հիման վրա:

21. Յերկրորդ հնդամյակում ի՞նչպիսի հիմնական խնդիրներն են դրված սոցիալիստական արդյունաբերության և տրանսպորտի տեխնիկական վերակառուցման բնագավառում:

22. Ի՞նչպիսի հիմնական խնդիրներն են դրված յերկրորդ հնդամյակում գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցման բնագավառում:

23. Ի՞նչպիսի հիմնական խնդիրներն են դրված յերկրորդ հնդամյակում աշխատավորության նյութական գրությունը բարելավելու բնագավառում:

24. Ի՞նչպիսի հիմնական խնդիրներն են դրված յերկրորդ հնդամյակում «առաջիկա տաս տարում տեխնիկատնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» նշանաբանը կտարելու նկատմամբ:

25. Վո՞րոնք են հիմնական թերությունները սոցիալիստական արդյունաբերության աշխատանքում և վո՞րոնք այդ թերությունների պատճառները:

26. Ի՞նչումն է կայանում ընկ. Ստալինի վեց պայմանների նշանակութունը սոցիալիստական շինարարության համար:

27. Ի՞նչումն է կայանում «բայլերիկները պետք է ախրապետեն տեխնիկային» լոզունգի նշանակութունը:

28. Ի՞նչու կոլտնտեսությունների կազմակերպչական—տնտեսական ամրապնդումն այժմ կարևորագույն

խնդիր է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

29. Ի՞նչումն է կայանում արտելի տարբերական առանձնահատկությունները և ի՞նչու արտելը հանդիսանում է կոլտնտեսությունների հիմնական ձևը Ժամանակակից շրջանում:

30. Ի՞նչպես պետք է կազմակերպվեն աշխատանքը և յեկամուտների բաշխումը կոլտնտեսություններում:

31. Ի՞նչու հասարակական սեփականությունը սրբագործված է և անձեռնմխելի:

32. Վո՞րն է կոլտնտեսական առևտրի նշանակությունը և վո՞րոնք են նրա ծավալման խնդիրները:

33. Ի՞նչ նշանակություն ունեն կառավարության վորոշումները հացամթերումների և մսամթերումների մասին:

Գ) ԲՍՅԻ ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՅԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒՑ ԿԱՐՄԻՐ ԲՍՆԱԿԱՅԻՆԸ ՊԵՏԳ Ե.

1) Կարողանա ըստ իրեն տետրի պատմել սոցիալիստական շինարարության մեջ հիմնական ճյուղերի նկատմամբ մեր գլխավոր նվաճումների մասին և այդ ճյուղերի հիմնական նշումների մասին յերկրորդ հնդամյակում:

2) Կարողանա պատմել հիմնական նորակառույցների մասին և այդպիսիք ցույց տա քարտեզի վրա:

3) Գիտենա կոլտնտեսությունների կազմակերպչական—տնտեսական ամրապնդման հիմնական սկզբունքները (գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, Կոլտնտիկետրոնի 1932 թ. փետրվարի 11-ի և հետագա

Հրահանգները) կոլտնտեսուի թյուներում աշխատանքի
կազմակերպման և յեկամոտների բաշխման կարգին
վերաբերող մասում :

4) Գիտենա կառավարության և կուսակցության հիմնական վերոշումները կոշտնոսական առևտրի, հացա—և մսամթերումների, հողդուռագործման մասին :

Դ) ԹԵՄԱՆ ՄՇԱԿԵԼՈՒ ԸՆԹԱՅԲՈՒՄ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՊԵՏՔ Ե .

1) Տետրում գրի առնի այն հիմնական թվերը, վորոնք բնորոշում են կապիտալիստական տնտեսության ճգնաժամը և մեր նախաճումները սոցիալիստական շինարարության մեջ և յերկրորդ հնգամյակի հիմնական նշումները :

2) Տեսրում գրել հիմնական նորակառույցները:

3) φ_{PL} .

ա) քաղվածքներ XVII կուսկոնֆերենցիայի վորոշումներից առաջին հնդամյակի ամփոփումների մասին (հատված II) .

բ) քաղվածք XVII կուսկոնֆերենցիայի վերոշումից
յերկրորդ Հնդամյակի քաղաքական և տնտեսական խըն-
դիրների մասին (Հատված III) .

գ) Ընկ. Ստալինի վեց պալմանների համառոտ՝ բացատրություն.

դ) 1, 3, 6, 7, 8, 16, 24 և 29 մոնտրու հարցերի պատասխանները:

IV. ZUU 4 (F) 4 (8-10 dUU)

Ս.) ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՄ Կ(Բ)Կ-Ն ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՎԱՆԳԱՐԴՆ Ե,
ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ (2 ժամ)

Բանվոր դասակարգը ժամանակակից հասարակու-
թյան ամենահեռեկողականն, կազմակերպված, հեղափո-
խական դասակարգն է։ Համ Կ(բ)Կ-ն և ՍՀՄ-ի բանվոր
դասակարգի ավանդարդն է, առաջավոր ջրկատր։ «Բան-
վոր դասակարգն առանց հեղափոխական կուսակցության,
չոր դասակարգն առանց շտաբի» (Ստալին)։ Կուսակցու-
դա բանակ է առանց շտաբի (Ստալին)։ Կուսակցու-
թյունը բանվոր դասակարգի մարտական զենքն է պրո-
լետարական իրիկտատուրան, զրավելու և ամրապնդելու
համար, նոր իրավակարգ կառուցելու համար։

Համար, նոր լրավակարգ կառուցման
Համ Կ(բ)Կ-ն պրոլետարիատի միակ հեղափոխա-
կան կուսակցութունն է, վորը յերեք տասնյակ տա-
րուց ավելի անսնսան (սոսնց տատանվելու) և վստա-
հորեն պայքարում է սոցիալիզմի համար և աշխատա-
վարությունը հաղթականորեն տանում դեպի կոմու-
նիզմ: Կուսակցության պատմությունը բանլոր դասա-
կարգի պայքարի և հաղթանակների պատմությունն է:
Որինակներ, վորոնք ցույց են տալիս կուսակցության
դերը Ռուսաստանի բանվորների հեղափոխական պայ-
քարում (կուսակցության առաջացումը, II համազու-
մարը, 1905 թիվը, ճակցիայի և վերելքի տարիները,
իմպերիալիստական պատերազմը, փետրվար-հոկտեմ-
բերը): Լենինը բայլշևիկյան կուսակցության կազմա-
կերպիչ: Կուսակցության և Լենինի դերը ցարիզմի,
կալվածատերերի և բուրժուազիայի դեմ մղված պայ-
քարում, Լենինի և կուսակցության կատաղի պայքարը

65

համաձայնողականներին՝ մենչեիկներին, մասնավորապես Տրոցկու, եսերներին և բանվոր դասակարգի բոլոր թըշնամիներին դեմ, վորոնք դավաճանել են բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիության շահերին (ցարտուն փաստերով կուսակցության պայքարի պատմությունից 1905 թ. ռեկացիայի տարիներին, իմպերիալիստական պատերազմի տարիներին): Կուսակցությունը Հոկտեմբերյան հաղթանակի կազմակերպիչն է մեր յերկրում (1917 թ. պատմական փաստերով):

II. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՅԵՎ ԱՇԽԱՏՈՒՄ

ՀԱՄԿ(Բ)Կ-Ն (2 ժամ)

Լենինյան միասնությունն ու թիաժողովությունը, բայլչեիկյան համախմբվածությունն ու կուսակցական յերկաթե կարգապահութունը, ինքնաքննադատությունը, ոպորտունիզմի դեմ յերկու Ֆրոնտում տարվող անհաշտ պայքարը հանդիսանում են բայլչեիկյան կուսակցության կառուցման հիմքերը, վորոնք ապահովում են լենինիզմի հաղթանակը:

Անդամության կամավորությունը կուսակցության մեջ: Ով կարող է լինել կուսակցության անդամ: Կոմունիստի դերը վորպես առաջատար գործարանում, կոլտնտեսության մեջ Կարմիր բանակում: Կուսակցության կանոնադրության և ծրագրի նշանակումը (տեղը, կոչումը): Ի՞նչու արտադրական բջիջը կուսակցության հիմքն է: Բանվորական կորիզի ամրապնդումը կուսակցության կարևորագույն խնդիրն է: Լենինը գործարանների մասին, վորպես մեր ամրոցների մասին: Կուսակցության սոցիալական վաղմը: Կուսակցության աշխատանքը լավագույն հարվածայիններին կուսակցության շարքերում հավաքագրելու գործում: Կարմիր

բանակայիններին կուսակցության մեջ ընդունելու կարգը զինվորական բջիջներում: Կուսակցության գտումը և նրա խնդիրը: Կարմիր բանակի կուսակցական կազմակերպությունների դերը գյուղում ամրակուռ բայլչեիկյան կազմակերպություններ ստեղծելու գործում: Կուսակցական բոլոր մարմինների ընտրվածությունը: Բջիջի բյուրոյից մինչև կուսակցության կենտրումը: Կուսչինարարության առանձնահատկությունները ԲԳԿԲ-ում:

Կուսակցության գերագույն մարմինը Համ Կ(Բ)Կ-ի համագումարներն են: Համ Կ(Բ)Կ-ի համագումարները և կոնֆերենցիաները սոցիալիզմի կառուցման խոշորագույն ետապներն են: Կուսակցության XIV համագումարը վորպես ինդուստրացման համագումար: XV համագումարը—կոլեկտիվացման համագումար: XVI համագումարը վորպես սոցիալիզմի ծավալուն արշավի համագումար ամբողջ Ֆրոնտով: XVII Կուսկոնֆերենցիան—անդրասակարգ սոցիալիստական հասարակության կառուցելու Կոնֆերենցիա: Համ Կ(Բ)Կ-ն սոցիալիստական հարձակողականը գլխավորող ամբողջ Ֆրոնտում:

Լենինը, ՀամԿ(Բ)Կ-ն և Ստալինը: Լենինը վորպես տեսաբան. ՀամԿ(Բ)Կ-ի և Կոմինտերնի կազմակերպիչն ու առաջնորդը: Լենինն առաջին խորհրդային պետության կազմակերպիչն ու սոցիալիստական շինարարության մեծ պլանի հիմնադիրը: Լենինը մեռավ լենինիզմի ապրում է: Համ Կ(Բ)Կ—ԿԿ-ն սոցիալիստական շինարարության և յերկրի պաշտպանության պրոլետարական ղեկատարության ղեկավար շտաբն է: ՀամԿ(Բ)ԿԿ-ն վորպես լենինյան կուսակցության ղեկավար շտաբը, Լենի-

նի գործը շարունակողը: Համ Կ(բ) ԿԿ-ի Գաղթյուրոն: ԿՎՀ-ն և նրա խնդիրները: Համ Կ(բ) ԿԿ-ի գլխավոր քարտուղար ընկ. Ստալինը Լենինի ամենահետևողական ու լավագույն աշակերտն է, նրա գործը շարունակողը: Ընկ. Ստալինի կենսագրությունը: Ընկ. Ստալինի դերը քաղաքական պատերազմում և Կարմիր բանակի ղեկավարության մեջ: Ընկ. Ստալինի դերը լենինյան գծի կիրառման մեջ սոցիալիստական վերակառուցման շրջանում: Ստալինը տեսաբան, Համ Կ(բ) ԿԿ-ի և Կոմիտեների կադրակերպիչն ու առաջնորդը:

Համ Կ(բ) Կ Լենինյան Կենտկոմի ղեկավարությունում գլխավորող ունենալով ընկ. Ստալինին բանվոր դասակարգը դաշնակցած աշխատավոր գյուղացիության հետ կենսագործում է լենինյան պատգամները, իկանքում կիրառում ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման լենինյան գլխավոր սլանը:

III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅԳԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՃԱԿԱՏՈՒՄ ԼԵՆԻՆՅԱՆ ԳԼՎԱՐ ԳԾԻ ՀԱՄԱՐ (4 ժամ)

1. Պայքարը յերկու մակատում—կուսակցության մարտական հզորության գրավակման: Կուսակցության, քանի որ դասակարգի և ամբողջ աշխատավորության առաջնորդի առաջ կանգնած խնդիրների բարդությունը: Կուսակցական շարքերի համախմբվածությունը, յերկաթե կարգապահությունը, կուսակցության շարքերի միասնությունը Համ Կ(բ) Կ-ի մարտական հզորության գրավակման է, նրա ճիշտ ղեկավարության գրավակմանը բանվոր դասակարգի և վողջ աշխատավորության կողմից: Վ. Ի. Լենինի վողջ կյանքն ու աշխատանքը, կուսակցության ամբողջ պատմությունը

կուսակցության միասնության համար անհաշտ պայքարի պատմությունն է ընդդեմ ոպորտունիստների, վորոնք վործում են կուսակցությանը հեղափոխական ճանապարհից շեղել դասակարգային թշնամու ձեռնառու ճանապարհի վրա (որինակ—Լենինի պայքարը մենչևիկներին դեմ, վորոնք այժմ հանդիսանում են միջադային սոցիալ-Փաշիզմի ջոկատը, կատաղի ու մոլի հակահեղասոցիալ-Փաշիզմի ջոկատը, կատաղի—ամբացնել կուսակցության փոխակառններ): Լենինի կտակը—ամբացնել կուսակցության բայլչևիկյան միասնությունը, ինչպես աչքի լույսը: Կուսակցության լենինյան միասնության և յերկասը: Կուսակցության լենինյան միասնության նշանակություն կարգապահության առանձնահատուկ նշանակությունը պրոլետարիատի դեկտատուրայի պայմաններում և կուսակցության բայլչևիկյան միասնության մասին լենինյան ավանդի անշեղ կատարումը կուսակցության կողմից ընկ. Ստալինի ղեկավարությամբ: Կուսակցության անհաշտ պայքարը յերկու ճակատում լենինյան գլխավոր գծի համար—ընդդեմ ամեն գույնի ոպորտունիզմի, ընդդեմ «ձախ» ոպորտունիստների, վորոնք վործում են ծածկել իրենց հակակուսակցական հայացքները «ձախ», իբր «հեղափոխական» բռնեղով, ընդդեմ աջ ոպորտունիզմի, կուլակի գործակալի կուսակցության մեջ, գլխավոր վտանգի տվյալ շրջանում, ընդդեմ հաշտվողականների, վորոնք քարոզում են համաձայնիել հաշտվել ոպորտունիստների հետ, փոխանակ անհաշտ պայքարի նրանց դեմ, ընդդեմ յերկերեսանինների: Բոլոր ոպորտունիստներն անկախ նրանց հայացքներից ու խոսքերից, վորոնցով ծածկում են այդ հայացքները, հանդիսանում են դասակարգային թշնամու ոժանդակողները, նրա գործակալները:

2. Կուսակցութեան պայքարը տրոցկիզմի դեմ: Լենինի և Կուսակցութեան պայքարը տրոցկիզմի դեմ մինչև 1917 թ. հոկտեմբերը և նրանից հետո: Տրոցկիզմի հայացքները—մեր յերկրի բանվոր դասակարգի և գյուղացիութեան ուժերով իՍՏՄ—ում սոցիալիզմ կառուցելու հնարավորութեան ժխտումը, հայացքներ աշխատավոր գյուղացիութեան մասին, վորպես բանվոր դասակարգի թշնամիներ, գյուղացիական հիմնական մասսաներին սոցիալիզմի կառուցման և գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակազմութեան մեջ ներգրավելու հնարավորութեան ժխտումը. Կուսակցութեան մեջ յերկաթե կարգապահութեան անհրաժեշտութեան ժխտումը. տրոցկիստների փորձերը կազմակերպելու իրենց սեփական Կուսակցութիւնը: Ընկ. Ստալինի ղեկավարութեամբ տրոցկիզմի ջախջախումը Կուսակցութեան կողմից, նրա հակահեղափոխական ելութեան մերկացումը: Տրոցկիզմը Կուսակցութիւնից և իՍՏՄ—ի սահմաններից վրնդելը: Տրոցկիզմը վորպես հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը, վորն ինտերվենցիա յե պատրաստում իՍՏՄ—ի դեմ:

3. Կուսակցութեան պայքարը «ձախ» ոպորտունիստների դեմ: «Ձախ» ոպորտունիստների հակակուսակցական հայացքները: «Ձախ» թեքումները կոլեկտիվացման մեջ 1930 թ. վորպես տրոցկիստական վերաբերմունքի արտահայտութիւն միջակ գյուղացիութեան նկատմամբ: «Ձախերի» առաջարկութեան դասակարգայնորեն ոտար ելութիւնը հավասարեցման մասին, դրամի անմիջապես վերացման մասին, կոլտնտեսութիւն-

ները խորհտնտեսութիւնների վերածելու մասին, առկտրի վերացման և ուղղակի ապրանքափոխանակութեան անցնելու մասին և այլն: Կոլտնտեսական անասունների հարկադրաբար համայնացնելու «ձախերի» քաղաքականութեան դասակարգայնորեն անհարգատեյութիւնը: Կուսակցութեան վճռական և անհաշտ պայքարը «ձախ» ոպորտունիստների դեմ և նրանց ջախջախումը:

4. Կուսակցութեան պայքարն աջ ոպորտունիզմի դեմ: Աջ ոպորտունիստների դիժը՝ կուլակա-կապիտալիստական տարրերին անձնատուր լինելու դիժն է: Աջերի առաջարկութիւնն ինդուստրացման տեմպերը դանդաղեցնելու մասին: Նրանց յելուցիները խորհտնտեսութիւնների և կոլտնտեսութիւնների շինարարութեան ծախալման դեմ, հանուն կուլակի հետ հաշտութեան, ընդդեմ կուլակութեան դեմ պայքարի: Աջերի քարոզը «կուլակի ներճումը սոցիալիզմի մեջ»: Աջերը՝ ինքնահոսի կողմնակիցներ են սոցիալիստական շինարարութեան մեջ:

Աջ ոպորտունիստները՝ կուլակի դորձակալներն են: Աջերի գլորվելը կուլակային հակահեղափոխութեան դիրքերի վրա: Աջ ոպորտունիզմը՝ գլխավոր վտանգն է, «վորովհետեւ նա արտացոլում է կուլակային վտանգը, իսկ կուլակային վտանգը տվյալ մոմենտում, ծախալուն հարձակման և կապիտալիզմի արմատախիւ անելու մոմենտում, հիմնական վտանգն է յերկրում» (Ստալին):

Սոցիալիստական շինարարութեան վիթխարի հա-

Չողությունները խՍՀՄ-ում՝ կուսակցության կողմից լենինյան գլխավոր գծի անշեղ կիրառման, ուղղորտունիզմի դեմ անհաշտ պայքարի արդյունքներն են։ Դասակարգային պայքարը յերկրորդ հնգամյակում և կուսակցության հետագա անհաշտ պայքարի խնդիրներն ուղղորտունիզմի դեմ։

Բ) ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐ

1. Վո՞րն է կոմունիստական կուսակցության դերը կապիտալիզմի դեմ մղած բանվորների հեղափոխական պայքարում։

2. Կուսակցությունն ի՞նչպես է իրադրծում սոցիալիստական շինարարության իր ղեկավարությունը։

3. Ի՞նչպես է կառուցված Համ Կ(բ)։

4. Ինչո՞ւմն է կայանում Համ Կ(բ) 14-րդ, 15-րդ և 16-րդ համագումարների և 17-րդ կուսկոնֆերենցիայի նշանակությունը։

5. Ի՞նչու կուսակցության կարգապահությունը և լենինյան միասնությունը վճռական նշանակություն ունեն կապիտալի դեմ բանվորի դասակարգի մղած պայքարի համար։

6. Ի՞նչու տրոցկիզմը հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատն է։

7. Կուսակցությունն ի՞նչպես եր պայքարում և ի՞նչպես է այժմ պայքարում «ձախ» ուղղորտունիզմի դեմ։

8. Ի՞նչպիսի հայացքներ են պաշտպանում աջ ուղղորտունիստները և ի՞նչու աջ ուղղորտունիզմն այս շրջանում գլխավոր վտանգն է հանդիսանում։

9. Ի՞նչպիսի փաստեր են վկայում այն մասին, վոր ուղղորտունիստները դասակարգային թշնամու գործադաշններն են։

10. Ո՞վքեր են հաշտվողականները և ի՞նչու կուսակցությունը պայքարել և պայքարում է նրանց դեմ։

11. Վո՞րոնք են ուղղորտունիզմի դեմ պայքարի խնդիրները յերկրորդ հնգամյակում։

Գ) ԲԱՑԻ ԿՈՆՏՐՈՒ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒՅ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԸ ՊԵՏՔ Ե

1) Գիտենա ընկ. ընկ. Լենինի և Ստալինի համառոտ կենսագրությունը և Համ Կ(բ) ԿԿ Քաղբյուրոյի կազմը։

2) Գիտենա Համ Կ(բ) կառնադրություն հիմնական սկզբունքները կուսակցության կառուցվածքի մասում (բջիջ, կոնֆերենցիա, համագումարներ, Համ Կ(բ) Կենտկոմ, Քաղբյուրո և Կազմբյուրո, ԿՎՀ)։

Դ) ԹԵՄԱՆ ՄՇԱԿԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՊԵՏՔ Ե ԳՐԻ ԱՌՆԻ

1) 1-ին, 5-րդ և 8-րդ կոնտրոլ հարցերի պատասխանները։

2) Քաղվածքը ընկ. Ստալինի ճառից աջ թեքման մասին (հատված III և IV)։

3) Քծել Համ Կ(բ) Կ-ի կառուցվածքի սխեման։

V. ԽՍՀՄ-Ն ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՄԵԶ (14-16 ԺԱՄ)

Ա) ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՆԵՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (2 Ժամ)

«Պատերազմը՝ տիրապետող դասակարգի քաղաքականության շարունակությունն է, միայն ուրիշ միջոցներով»։ Կապիտալիստների քաղաքականությունը՝ բանվոր դասակարգի ու գյուղացիության շահագործման և զաղուլթների միլիոնավոր աշխատավորության ճնշման ու հարստահարման քաղաքականությունն է։ Յերկրագնդի բաժանումը կապիտալիզմի պայմաններում խոշորագույն իմպերիալիստական պետությունների կողմից և պայքարը իմպերիալիստական յերկրների միջև համաշխարհային տիրապետության համար, յերկրագնդի նոր վերաբաժանման համար։ Պատերազմների անխուսափելիությունը կապիտալիզմի պայմաններում։ Պացիֆիստական (խաղաղարարական) հայացքների ստույթյունն և վնասակարությունը, վորպիսիք տարածում են բուրժուազիան և սոցիալ-ֆաշիստները, նրա համար, վորպեսզի խտրեն բանվորներին և յետ պահեն նրանց կապիտալիզմի տապալման համար մղվող հեղափոխական պայքարից։ Պատերազմները վոչնչացնելու միակ ուղին՝ կապիտալիզմի վոչնչացումն է։

II Ինտերնացիոնալի դավաճան դերը, վորը քողարկում է իմպերիալիստական պատերազմների իսկական

եյությունը և հանդիսանում իմպերիալիզմի մարտական ջոկատը Խորհրդային Միության դեմ նոր պատերազմներ և յնտերվենցիա պատրաստելու գործում։

Պրոլետարիատի վերաբերմունքը դեպի պատերազմները նայած նրանց բնույթին։ Պրոլետարիատը պայքարում է պատերազմների դեմ, վոր տանում են իմպերիալիստները յերկրագնդի վերաբաժանման համար, զաղուլթների աշխատավորությանը ճնշելու և ստրկացնելու համար և ձգտում է այդ պատերազմները վերածել բանվոր դասակարգի և աշխատավորության քաղաքացիական պատերազմի բուրժուազիայի դեմ։

Պրոլետարիատն աջակցում է զաղուլթային ճնշված ազգերի պատերազմներին ընդդեմ ճնշողների, իմպերիալիստների, մղում է սոցիալիզմի պատերազմներն իմպերիալիզմի դեմ և կազմակերպում պրոլետարական դիկտատուրայի պետության պաշտպանությունը իմպերիալիստների դեմ։

II. ԽՍՀՄ-Ի ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (2 Ժամ)

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը և հակառուլթյունների սրումն իմպերիալիստների լազերում։

